

**ՏԻՊԱՅԻՆ ՊԱՅՍԱՆԱԳՐԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

СБОРНИК ТИПОВЫХ ДОГОВОРОВ

Երևան 2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիր	4
Առքուվաճառքի պայմանագիր (ընդհանուր ձև)	6
Ավտոմեքենայի առքուվաճառքի պայմանագիր	8
Ավտոմեքենայի գրավի պայմանագիր (գրավի առարկան գրավատուի մոտ մնալու պայմանով)	10
Առդիտորական ծառայության մատուցման պայմանագիր	12
Բանկային ավանդի պայմանագիր	14
Բանկային երաշխիքի պայմանագիր	16
Բանկային հաշվի պայմանագիր	18
Բեռնափոխադրման պայմանագիր	20
Բժշկական ապահովագրության պայմանագիր	22
Բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր	24
Գիտահետազոտական աշխատանքների կատարման պայմանագիր	27
Գործակալական պայմանագիր	29
Գրավի պայմանագիր	31
Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր	33
Գույքի ապահովագրության պայմանագիր	35
Գույքի վարձակալության պայմանագիր	37
Ենթավարձակալության պայմանագիր	40
Երաշխավորության պայմանագիր	43
Լիազորագրի տիպային ձև	44
Լիազորագիր իրավաբանական անձի անունից պայմանագիր կնքելու համար	44
Ծառայությունների մատուցման պայմանագիր	45
Կապալի պայմանագիր	47
Կապիտալ շինարարության կապալի պայմանագիր	50
Կոմիսիայի պայմանագիր	52
Համակարգչային սպասարկման պայմանագիր	54
Համատեղ գործունեության պայմանագիր	56
Հանձնարարության պայմանագիր	58
Հեղինակային պայմանագիր	60
Հողամասի անհատույց օգտագործման պայմանագիր	61
Հողամասի առքուվաճառքի պայմանագիր	63
Հողամասի վարձակալության պայմանագիր	65
Ձեռնարկության առքուվաճառքի պայմանագիր	68
Մատակարարման պայմանագիր (1)	70
Մատակարարման պայմանագիր (2)	72
Մարկետինգային ծառայությունների մատուցման պայմանագիր	75
Մշտական ռենտայի պայմանագիր	77
Նախնական պայմանագիր	79
Նվիրատվության պայմանագիր	80
Շինարարական կապալի պայմանագիր	81
Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր	84
Պահեստավորված պահպանության պայմանագիր	87
Պայմանագրի փոփոխման և լրացումներ կատարելու համաձայնագիր	89
Պայմանագրի լուծարման համաձայնագիր	90
Վարկային պայմանագիր	91
Վարձակալության պայմանագիր (ընդհանուր ձև)	93
Վերանորոգման աշխատանքների կապալի պայմանագիր	95
Տրանսպորտային առաքման պայմանագիր	97
Տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր (կառավարման և տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցմամբ)	99
Փոխանակության պայմանագիր	102
Փոխանակության պայմանագիր ձեռնարկության և ֆիրմայի միջև	104
Փոխառության պայմանագիր	105
Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիր	106

Авторский договор	108
Агентское соглашение	109
Аренды	111
Банковского счета	113
Депозитный договор	114
Займа	115
Залога	116
Имущественного страхования	118
Комиссии	120
Кредитный договор	122
Купли-продажи	124
Купли-продажи недвижимости	125
Купли-продажи предприятия	127
Мены	129
На оказание услуг	130
Об оказании аудиторских услуг	132
О расторжении договора (соглашение)	134
Перевозки груза	135
Подряда	137
Поручения	139
Поставки	141
Предварительный договор	143
Складского хранения	144
Финансовой аренды (лизинга)	146

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.
վայրը _____, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
_____ հիման
պաշտոնը, ազգանունը, անունը
վրա, մի կողմից, և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
_____ հիման
պաշտոնը, ազգանունը, անունը
վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը, որպես սեփականություն, ձեռք է բերում _____ մ² ընդհանուր մակերեսով տարածք (այսուհետ՝ «Օբյեկտ») _____ հասցեում:
- 1.2. Օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է Վաճառողին:
- 1.3. Օբյեկտի վաճառքի գինը որոշված է կողմերի համաձայնությամբ:
- 1.4. Սույն պայմանագիրը կնքելու պահին Օբյեկտը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ, ինչպես նաև արգելանքի տակ չի գտնվում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

- 2.1. Վաճառողն իրավունք ունի.
 - 2.1.1. Պահանջել վճարելու Օբյեկտի համար տոկոսներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան, եթե Գնորդը ժամանակին չի վճարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված Օբյեկտի համար.
 - 2.1.2. Իր ընտրությամբ պահանջել վճարելու Օբյեկտի համար կամ հրաժարվելու պայմանագիրը կատարելուց, եթե Գնորդը սույն պայմանագրի խախտմամբ հրաժարվում է Օբյեկտն ընդունելուց և դրա համար վճարելուց:
- 2.2. Վաճառողը պարտավոր է՝
 - 2.2.1. պայմանագիրը կնքելուց հետո՝ _____ օրացուցային օրվա ընթացքում, հանձնման-ընդունման ակտով, Գնորդին փոխանցել Օբյեկտը:
 - 2.2.2. Օբյեկտը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել նրա պատկանելիքները և նրան վերաբերող բոլոր փաստաթղթերը.
 - 2.2.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Օբյեկտ.
 - 2.2.4. մինչև սույն պայմանագրի կատարումը ծագած հիմքով երրորդ անձանց կողմից Օբյեկտն առգրավելու դեպքում հատուցել Գնորդի վնասները.
 - 2.2.5. եթե երրորդ անձինք մինչև պայմանագրի կատարումը ծագած հիմքով հայց են հարուցում Օբյեկտն առգրավելու մասին, Գնորդին մասնակից դարձնել գործի քննությանը:
- 2.3. Գնորդն իրավունք ունի՝
 - 2.3.1. հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Վաճառողը սույն պայմանագրով սահմանված ժամկետում հրաժարվում է հանձնել վաճառված Օբյեկտը, Օբյեկտի պատկանելիքներն ու փաստաթղթերը.
 - 2.3.2. եթե Վաճառողը Գնորդին հանձնել է սույն պայմանագրի 1-ին կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտը կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից կամ դրա համար վճարելուց, իսկ եթե Օբյեկտի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:
- 2.4. Գնորդը պարտավոր է՝
 - 2.4.1. Օբյեկտի նկատմամբ իրավունքը գրանցել համապատասխան լիազոր մարմնում.
 - 2.4.2. վճարել Օբյեկտի արժեքը սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված կարգով, ժամկետներում և գումարի չափով.
 - 2.4.3. Վաճառողից Օբյեկտն ընդունել հանձնման- ընդունման ակտով.
 - 2.4.4. հանդես գալ որպես Վաճառողի իրավահաջորդ՝ Օբյեկտի հետ կապված շահագործման և քաղաքաշինական բնույթի պարտավորություններում:
 - 2.4.5. Իր հաշվին կատարել Օբյեկտի շահագործման և վերանորոգման հետ կապված ծախսերը, ինչպես նաև զբաղեցրած տարածքին համաչափ մասնակցել շենքի տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծախսերին, որտեղ գտնվում է Օբյեկտը:

3. Հաշվարկները

- 3.1. Օբյեկտի գինը որոշվում է կողմերի համաձայնությամբ, որը կազմում է _____ (_____) դրամ:
- 3.2. Գնորդը, պայմանագիրը կնքելու պահից հետո _____ օրվա ընթացքում, Վաճառողին վճարում է Օբյեկտի գնի գումարը:
- 3.3. Պայմանագիրը կնքելու, ձևակերպելու և գրանցելու հետ կապված բոլոր ծախսերի համար վճարում է _____:

4. Կողմերի պատասխանատվությունը

- 4.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
- 4.2. Սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված վճարի կետանցի դեպքում Գնորդը Վճարողին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար _____ տոկոսի չափով:

5. Պայմանագրի գործողությունը

- 5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5.2. Կողմերի միջև հարաբերությունները դադարում են սույն պայմանագրի պայմանների և հաշվարկների լրիվ կատարման դեպքում:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավուք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Վեճերի լուծման կարգը

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է _____ դատարանի քննությանը:

7.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Այլ պայմաններ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<i>Վաճառող</i>	<i>Գնորդ</i>
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
(Ընդհանուր ձև)

« _____ » _____ թ.

վայրը _____, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
_____ , որը գործում է _____ հիման
պաշտոնը, ազգանունը, անունը
վրա, մի կողմից, և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
_____ , որը գործում է _____ հիման
պաշտոնը, ազգանունը, անունը
վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է Գնորդին, որպես սեփականություն, հանձնել ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:
1.2. Սույն պայմանագրին համապատասխան՝ ապրանք է համարվում

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վաճառողն իրավունք ունի պահանջել Գնորդից վճարելու ապրանքի համար, իսկ ուշացման դեպքում՝ նաև տուկոսներ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան:

2.2. Վաճառողը պարտավոր է՝

2.2.1. Գնորդին հանձնել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան:

2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1. եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված ապրանքը, միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց:

2.3.2. եթե Վաճառողը հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել չհանձնված ապրանքի համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:

2.3.3. եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք, իր ընտրությամբ պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը:

բ) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները:

գ) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

2.3.4. չվերացվող թերություններ հայտնաբերելու դեպքում, իր ընտրությամբ՝

ա) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և՛ պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

բ) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով:

2.3.5. անկոմպլեկտ ապրանք հանձնելու դեպքում իր ընտրությամբ պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը:

բ) ողջամիտ ժամկետում կոմպլեկտավորելու ապրանքը:

2.4. Գնորդը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված տեսականուն չհամապատասխանող ապրանքն ընդունելու դեպքում՝ դրանց համար վճարել Վաճառողի հետ համաձայնեցված գումար:

2.4.2. ապրանքի համար վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:

2.4.3. ապրանքը Վաճառողից ընդունելու ժամանակ ստուգել ապրանքի անվանման, քանակի և որակի համապատասխանությունը թիվ 1 հավելվածին: Ապրանքն ընդունելու արդյունքում կողմերը կազմում և ստորագրում են ապրանքի ընդունման - հանձնման ակտ, որում նշվում է ապրանքի անվանումը, քանակը, որակը, հայտնաբերված թերությունները:

3. Հաշվարկները

3.1. Պայմանագրին կից թիվ 1 հավելվածում նշված ապրանքի ընդհանուր գումարը, որը Գնորդը պետք է վճարի Վաճառողին, կազմում է _____ դրամ:

3.2. Գնորդը պայմանագրի 3.1. կետում նշված գումարը վճարում է Վաճառողին _____ կանխիկ կամ փոխանցումով

սույն պայմանագիրն ստորագրելու պահից _____ օրվա ընթացքում:

3.3. Եթե Գնորդը պայմանագրով սահմանված ժամկետում չկատարի հանձնված ապրանքի համար վճարելու իր պարտականությունները, ապա Վաճառողն իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վաճառողի կողմից ապրանքը հանձնելու կետանցի դեպքում նա Գնորդին վճարում է ապրանքը հանձնելու պարտականությունը կատարելու ժամկետի սկզբից կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ ապրանքի գնի տոկոսի չափով:

4.2. Կողմերը սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում, իրենց պարտավորությունները չկատարելու

համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

5.2. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր: Գրանք պետք է ստորագրեն կողմերը:

5.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

6.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող

ստորագրություն

Գնորդ

ստորագրություն

ԱՎՏՈՄԵԲԵՆԱՅԻ ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«___» _____ թ.
վայրը _____, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
_____, որը գործում է _____ հիման
պաշտոնը, ազգանունը, անունը
վրա, մի կողմից, և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
_____, որը գործում է _____ հիման
պաշտոնը, ազգանունը, անունը
վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է Գնորդին որպես սեփականություն հանձնել ավտոմեքենա, իսկ Գնորդը պարտավորվում է որպես սեփականություն ընդունել և վճարել ավտոմեքենայի համար.

մակնիշը _____
գրանցման նշանը _____
իդենտիֆիկացիոն համարը(VIN) _____
արտադրության տարեթիվը _____
շարժիչը _____
շաստին (ամրաշրջանակը) _____
թափքը (սայլակը) _____
գույնը _____:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է Վաճառողին, ինչը հավաստվում է տրանսպորտային միջոցի անձնագրով՝ սերիա _____ թիվ _____ տրված _____ թ. _____ կողմից:
Տրանսպորտային միջոցի գրանցման վկայականը՝ սերիա _____ թիվ _____ տրված _____ թ. _____ պետավտոտեսչության կողմից:

2. Ավտոմեքենայի գինը

2.1. Ըստ _____ թ. _____ կողմից տրված գնահատման
գնահատում կատարողի անվանումը
փաստաթղթի՝ ավտոմեքենայի արժեքը _____ (_____) դրամ է:
2.2. Կողմերը գնահատել են ավտոմեքենան _____ (_____) դրամ:

3. Կողմերի իրավունքները և պարտականություններ

3.1. Վաճառողն իրավունք ունի՝
3.1.1. սույն պայմանագրին համապատասխան հանձնված ավտոմեքենայի համար Գնորդի կողմից ժամանակին չվճարելու դեպքում՝ պահանջել վճարելու ավտոմեքենայի համար նաև տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան.
3.1.2. եթե Գնորդը սույն պայմանագրի խախտմամբ հրաժարվում է ավտոմեքենան ընդունելուց և դրա համար վճարելուց՝ իր ընտրությամբ պահանջել վճարելու ավտոմեքենայի համար կամ հրաժարվել պայմանագիրը կատարելուց:
3.2. Վաճառողը պարտավոր է՝
3.2.1. հանձնել սույն պայմանագրի 1-ին կետում նշված ավտոմեքենան սույն պայմանագիրը ստորագրելու օրվանից _____ օրվա ընթացքում.
3.2.2. ավտոմեքենան հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը.
3.2.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ավտոմեքենա.
3.2.4. մինչև սույն պայմանագրի կատարումը ծագած հիմքով երրորդ անձանց կողմից ավտոմեքենան առգրավելու դեպքում հատուցել Գնորդի վնասները.
3.2.5. մինչև պայմանագրի կատարումը ծագած հիմքով՝ երրորդ անձանց կողմից ավտոմեքենան առգրավելու մասին հայց հարուցելու դեպքում Գնորդին մասնակից դարձնել գործի քննությանը.
3.2.6. Գնորդին հանձնել սույն պայմանագրին համապատասխան որակի ավտոմեքենա.
3.2.7. Նմուշով և (կամ) նկարագրով ավտոմեքենա վաճառելիս Գնորդին հանձնել նմուշին և (կամ) նկարագրին համապատասխանող ավտոմեքենա.
3.2.8. Գնորդին տրամադրել ավտոմեքենայի որակի ստուգված լինելու մասին ապացույցներ:
3.3. Գնորդն իրավունք ունի՝
3.3.1. հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված ավտոմեքենան.
3.3.2. ավտոմեքենայի պատկանելիքները և փաստաթղթերը սույն պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չհանձնելու դեպքում՝ հրաժարվել ավտոմեքենայից կամ պահանջել.
ա) համաչափ պակասեցնելու ավտոմեքենայի գինը.
բ) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել ավտոմեքենայի թերությունները.
գ) հատուցել ավտոմեքենայի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.
3.3.4. ավտոմեքենայի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերություններ, ինչպես նաև այնպիսիք, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ որոնք բազմիցս և կրկին ի հայտ են գալիս դրանց վերացնելուց հետո և նման բնույթի այլ թերություններ), իր ընտրությամբ՝

ա) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ավտոմեքենայի համար վճարված գումարը.

բ) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի ավտոմեքենան սույն պայմանագրին համապատասխանող որակի ավտոմեքենայով.

3.3.5. անկոմպլեկտ ավտոմեքենա հանձնելու դեպքում, իր ընտրությամբ պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ավտոմեքենայի գինը.

բ) ողջամիտ ժամկետում կոմպլեկտավորելու ավտոմեքենան.

3.3.6. ավտոմեքենան կոմպլեկտավորելու պահանջները ողջամիտ ժամկետում Վաճառողի կողմից չկատարվելու դեպքում իր ընտրությամբ՝

ա) պահանջել փոխարինելու անկոմպլեկտ ավտոմեքենան կոմպլեկտավորված ապրանքով.

բ) հրաժարվել սույն պայմանագրից և պահանջել վերադարձնելու վճարված գումարը.

3.4. Գ-նորդը պարտավոր է՝

3.4.1. սույն պայմանագիրը ստորագրելու օրվանից _____ օրվա ընթացքում Վաճառողին վճարել պայմանագրի 1-ին կետում նշված ավտոմեքենայի արժեքը:

3.4.2. _____ օրվա ընթացքում Վաճառողին ծանուցել ավտոմեքենայի տեսականու, որակի, կոմպլեկտավորվածության վերաբերյալ սույն պայմանագրի պայմանների խախտումների մասին.

3.4.3. ընդունել իրեն հանձնված ավտոմեքենան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իրավունք ունի պահանջել փոխարինելու ավտոմեքենան կամ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց.

3.4.4. կատարել այնպիսի գործություններ, որոնք, սովորաբար ներկայացվող պահանջներին համապատասխան, անհրաժեշտ են նրա կողմից համապատասխան ավտոմեքենայի ընդունումն ապահովելու համար.

3.4.5. ավտոմեքենայի համար վճարել սույն պայմանագրում նախատեսված գինը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագրին ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

5.2. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր և ստորագրվում Կողմերի կողմից:

5.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

5.5. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող

ստորագրություն

Գ-նորդ

ստորագրություն

ԱՎՏՈՄԵԶԵՆԱՅԻ ԳՐԱՎԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
(ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՆ ԳՐԱՎԱՏՈՒԻ ՄՈՏ ՄՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ)

« _____ » _____ թ.
վայրը _____ այսուհետ՝ «Գրավատու»,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
ի դեմս (եթե իրավ. անձ է) _____, որը գործում է
_____ պաշտոնը, անունը, ազգանունը
_____ հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
այսուհետ՝ «Գրավառու», ի դեմս (եթե իրավ. անձ է) _____,
պաշտոնը, անունը, ազգանունը
որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետև յալի
մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. _____ թ. _____ նոտար՝ _____
նոտարական գրասենյակը _____ ազգանուն, անունը

կողմից վավերացված (գրանցման թիվ _____) անտոկոս փոխառության պայմանագրով՝ Գրավատուին
Գրավառուի կողմից հանձնված _____ (_____) գումարի դրամական միջոցները «____»
_____ թ. վերադարձնելու պարտավորությունները Գրավատուի կողմից չկատարելու դեպքում Գրավառուն
իրավունք ունի բավարարել իր պահանջները՝ սույն պայմանագրով գրավ դրված գույքի արժեքից:

1.2. Գրավի առարկա է ավտոմեքենա.

մակնիշը _____
գրանցման նշանը _____
իդենտիֆիկացիոն համարը(VIN) _____
արտադրության տարեթիվը _____
շարժիչը _____
շասին (ամրաշրջանակը) _____
թափքը (սայլակը) _____
գույնը _____:

1.3. սույն պայմանագրի 1.2 կետում նշված ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է Գրավատուին, ինչը հիմնավորվում է տրանսպորտային միջոցի անձնագրով՝ սերիա _____, թիվ _____, տրված _____ թ. _____ կողմից:

Տրանսպորտային միջոցի գրանցման վկայականը (տեխնիկական անձնագիր) (սերիա _____, թիվ _____, տրվել է _____ թ. պետավտոտեսչության կողմից:

1.4. _____ թ. _____ կողմից տրված գնահատման փաստաթղթի համաձայն՝ ավտոմեքենայի արժեքը _____ (_____) դրամ է:

1.5. Կողմերը սահմանել են, որ ավտոմեքենայի գրավային արժեքը կազմում է _____ (_____) դրամ:

1.6. Գրավ դրված գույքը գտնվում է Գրավատուի մոտ:

1.7. Մինչև սույն պայմանագիրը կնքելը պայմանագրի 1.2. կետում նշված ավտոմեքենան այլ անձի չի վաճառվել, գրավ չի դրվել, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Գրավատուն իրավունք ունի՝

2.1.1. տիրապետել և օգտագործել գրավի առարկան՝ իր նշանակությանը համապատասխան.

2.1.2. Գրավառուի գրավոր համաձայնությամբ տնօրինել գրավի առարկա գույքը՝ այն օտարելու կամ վարձակալության հանձնելու եղանակով:

2.2. Գրավառուն իրավունք ունի.

2.2.1. ստուգել գրավի առարկայի առկայությունը, վիճակը, ինչպես նաև պահպանման ու օգտագործման մյուս պայմանները.

2.2.2. Հայաստանի հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում պահանջել գրավով ապահովված պարտավորության վաղաժամկետ կատարում:

2.3. Գրավառուն պարտավոր է՝

2.3.1. Գրավատուի պահանջով նրան հանձնել պարտավորության կատարումը հավաստող փաստաթղթերը, եթե պարտավորությունը կատարվել է:

2.4. Գրավատուն պարտավոր է՝

2.4.1. իր հաշվին լրիվ արժեքով ապահովագրել գրավի առարկան (սույն պայմանագրի 1.4. կետը).

2.4.2. վաղօրոք գրավոր տեղեկացնել Գրավառուին գրավի առարկան տնօրինելու մտադրության մասին և առանց Գրավառուի գրավոր թույլտվության չտնօրինել գրավի առարկան.

2.4.3. առանց Գրավառուի հատուկ գրավոր թույլտվության թույլ չտալ սույն պայմանագրով գրավ դրված գույքի հաջորդող գրավ.

2.4.4. գրավի առարկայի հափշտակության, կորստի, վնասվածքի կամ հատկությունների վատթարացման դեպքում թույլ չտալ դրա հետևանքով ստացված ապահովագրական փոխհատուցման օգտագործումը որևէ այլ նպատակով, բացի Գրավառուի հանդեպ պարտավորությունների կատարումից, որոնց կատարումն ապահովելու համար կնքվել է սույն պայմանագիրը՝ մինչև վերոհիշյալ պարտավորությունների լրիվ կատարումը.

2.4.5. գրավի առարկան _____ օրվա ընթացքում հանձնել Գրավառուին, եթե Գրավառուն օրենքով սահմանված կարգով վաղաժամկետ բռնագանձում տարածելու իրավունք է ձեռք բերում և իրականացնում է այլ իրավունքը.

2.4.6. գրավի առարկան պահպանելու համար ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ, ներառյալ՝ դրա վերանորոգումը:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4. Կողմերի պատասխանատվությունը

Գրավատուն և Գրավառու, սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե կատարվել է գրավոր ձևով և վավերացվել նոտարի կողմից:

5.2. Նոտարը Կողմերին բացատրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 226, 227, 230, 233, 234, 249, 250 հոդվածների բովանդակությունը:

5.3. Նոտարը պայմանագիրը Կողմերի ներկայությամբ ընթերցել է բարձրաձայն:

5.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ և մեկ օրինակ մնում է նոտարական գրասենյակում:

5.5. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում գրավի առարկայի նկատմամբ Գրավառուի իրավունքի պետական գրանցման պահից:

6. Կողմերի հասցեները, վավերապայմաններն ու ստորագրությունները

Գրավատու

ստորագրություն

Գրավառու

ստորագրություն

ԱՌԻԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Աուդիտոր», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Հաճախորդ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Հաճախորդը հանձնարարում է, իսկ Աուդիտորն ստանձնում է աուդիտորական ստուգում անցկացնել և դրա արդյունքներով եզրակացություն տրամադրել:

1.2. Ստուգվող ժամանակաշրջանն է՝ _____:

1.3. Աուդիտորի աշխատակիցների ցանկը, որոնք անմիջականորեն անցկացնելու են ստուգումը, որոշված է սույն պայմանագրի թիվ 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Աուդիտորը պարտավոր է՝

2.1.1. Հաճախորդի ստուգումն սկսել ոչ ուշ, քան « _____ » _____ թ. և ավարտել մինչև « _____ » _____ թ.

2.1.2. պահպանել Հաճախորդի կազմակերպությունում սահմանված կանոնները.

2.1.3. ստուգումն ավարտելուց հետո Հաճախորդին ներկայացնել աուդիտորական եզրակացություն՝ սույն պայմանագրի թիվ 2 հավելվածում նշված ձևով մատուցված ծառայությունների ակտը երկուստեք ստորագրելու պահին.

2.1.4. Հաճախորդի խորհրդատվության և ստուգման ընթացքում օգտագործել օրինական մեթոդներ և միջոցներ ու ղեկավարվել գործող օրենսդրությամբ.

2.1.5. ստուգման ընթացքում ստացված տեղեկությունները և տվյալները հրապարակել միայն Հաճախորդի համաձայնությամբ:

2.2. Հաճախորդը պարտավոր է՝

2.2.1. Աուդիտորին ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց ցանկը մինչև ստուգումը սկսելն Աուդիտորը ներկայացնում է գրավոր պահանջով.

2.2.2. Աուդիտորի աշխատանքի համար առանձնացնել աշխատատեղ՝ տվյալ տեսակի աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումներով.

2.2.3. Աուդիտորի աշխատակիցներին պարզաբանումներ տրամադրելու համար անհրաժեշտության դեպքում ապահովել իր աշխատակիցների ներկայությունը.

2.2.4. սույն պայմանագրի պայմաններին համապատասխան՝ վճարել Աուդիտորի մատուցած ծառայությունների համար:

3. Ծառայությունների հանձնման և ընդունման կարգը

3.1. Սույն պայմանագրով Աուդիտորի մատուցած ծառայությունների արժեքը կազմում է _____
(_____) դրամ:

3.2. Հաճախորդը վճարումը պետք է կատարի համապատասխան հաշիվը ստանալուց հետո՝ _____
(_____) օրվա ընթացքում:

3.3. Հաշիվը ներկայացվում է մատուցված ծառայությունների ակտը ստորագրելուց հետո _____
(_____) օրվա ընթացքում: Ակտը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վճարների ուշացման համար Հաճախորդը պարտավոր է Աուդիտորին վճարել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի _____ տոկոսի չափով:

4.2. Աուդիտորի մեղքով Հաճախորդին եզրակացության տրամադրումն ուշացնելու համար Աուդիտորը պարտավոր է վճարել տույժ՝ ծառայությունների համար վճարման ենթակա ամբողջ գումարի չափով:

4.3. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Վեճերի լուծումը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկուստեք ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

6.2. Սույն պայմանագրում փոփոխություններն ու լրացումները կատարվում են գրավոր և ստորագրվում կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

6.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Առդիտոր

ստորագրություն

Հաճախորդ

ստորագրություն

ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Բանկ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Ավանդատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Բանկը, ընդունելով գումարը Ավանդատուից կամ նրա համար ստացված գումարը (այսուհետ՝ «Ավանդ»), պարտավորվում է Ավանդատուին վերադարձնել այդ գումարը, ինչպես նաև վճարել տարեկան _____ տոկոսի չափով:

1.2. Սույն պայմանագիրը համարվում է կնքված, եթե Ավանդը մուծվել է օրենքով և բանկային կանոններով սահմանված կարգով և հաստատվել է բանկային գրքույկով:

1.3. Սույն պայմանագիրը կնքված է Ավանդն Ավանդատուի առաջին իսկ պահանջով վերադարձնելու (այսուհետ՝ «Ցպահանջ ավանդ») պայմանով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Բանկն իրավունք ունի՝

2.1.1. փոփոխել Ավանդի համար վճարվող տոկոսների չափը: Տոկոսների չափը նվազեցնելու դեպքում դրանց նոր չափը կիրառվում է՝ տոկոսները նվազեցնելու մասին Ավանդատուին ծանուցելուց մեկ ամիս անց:

2.2. Բանկը պարտավոր է՝

2.2.1. Ավանդի գումարը կամ դրա մասը վերադարձնել Ավանդատուին՝ նրա առաջին իսկ պահանջով.

2.2.2. Ավանդատուին Ավանդի գումարից վճարել տոկոսներ՝ սույն պայմանագրի 1.1 կետով որոշված չափով.

2.2.3. Ավանդի գումարի վրա տոկոսներ հավելագրել՝ Ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև գումարն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվա նախորդող օրը.

2.2.4. Ավանդատուի պահանջով նրա Ավանդին տոկոսներ վճարել եռամսյակ առ եռամսյակ.

2.2.5. Ավանդը վերադարձնելիս վճարել այդ պահին հավելագրված բոլոր տոկոսները.

2.2.6. պարտադիր ապահովագրության միջոցով ապահովագրել Ավանդի վերադարձը.

2.2.7. Ավանդատուին տեղեկատվություն տրամադրել Ավանդի վերադարձի ապահովման մասին.

2.2.8. սույն պայմանագրով նախատեսված Ավանդը վերադարձնելու պատասխանատվությունը չկատարելու կամ թերանալու դեպքում, Ավանդատուի պահանջով նրան անհապաղ վերադարձնել Ավանդը, ներառյալ՝ տոկոսները, և հատուցել պատճառված վնասները:

2.3. Ավանդատուն իրավունք ունի՝

2.3.1. Բանկից պահանջել վերադարձնելու Ավանդի գումարը.

2.3.2. Բանկից պահանջել Ավանդի գումարից վճարելու տոկոսներ՝ սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված չափով.

2.3.3. Բանկից պահանջել իր Ավանդից եռամսյակ առ եռամսյակ վճարել տոկոսներ.

2.3.4. Բանկից պահանջել պարտադիր ապահովագրության միջոցով Ավանդի գումարի վերադարձը.

2.3.5. Բանկից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ Ավանդի վերադարձի ապահովման մասին.

2.3.6. սույն պայմանագրով նախատեսված Ավանդը վերադարձնելու պատասխանատվությունը Բանկի կողմից չկատարելու, ինչպես նաև ապահովման կորստի կամ դրա պայմանների վատթարացման դեպքում, Բանկից պահանջել անհապաղ վերադարձնել Ավանդը, ներառյալ՝ տոկոսները, և հատուցել պատճառված վնասները.

2.3.7. Բանկի կողմից տոկոսների չափը նվազեցնելու մասին ծանուցումը ստանալու օրվանից բանկային 15 օրվա ընթացքում հրաժարվել Ավանդի պայմանագրից և պահանջել Բանկից՝ անհապաղ վերադարձնել Ավանդի գումարը, ներառյալ՝ տոկոսները:

2.4. Ավանդատուն պարտավոր է՝

2.4.1. չմիջամտել բանկի ֆինանսատնտեսական գործունեությանը.

2.4.2. սահմանված ժամկետում տեղեկացնել, սույն պայմանագրի 2.3.7 կետում նշված հիմքով, պայմանագրից հրաժարվելու մասին.

2.4.3. պահպանել օրենքի, դրան համապատասխան սահմանված բանկային կանոնների և սույն պայմանագրի բոլոր պահանջները:

3. Բանկային գրքույկ

3.1. Ավանդատուի հետ բանկային Ավանդի պայմանագիրը կնքելը և նրա Ավանդի հաշվին դրամական միջոցներ մուծելը հավաստվում են բանկային գրքույկով: Այն կարող է լինել անվանական կամ ըստ ներկայացնողի:

3.2. Բանկային գրքույկում պետք է նշվեն և Բանկի կողմից հավաստվեն Բանկի, իսկ եթե Ավանդը ներդրված է Բանկի մասնաճյուղում՝ նաև համապատասխան մասնաճյուղի՝

3.2.1. անվանումը.

3.2.2. գտնվելու վայրը.

3.2.3. Ավանդի հաշվեհամարը.

3.2.4. հաշվում մուտքագրված և հաշվից դուրս գրված դրամական միջոցների բոլոր գումարները.

3.2.5. բանկային գրքույկը՝ բանկ ներկայացնելու պահին հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը:

3.3. Բանկային գրքույկում նշված Ավանդի վերաբերյալ տվյալները հիմք են Բանկի և Ավանդատուի միջև Ավանդով հաշվարկներ կատարելու համար:

3.4. Ավանդը վերադարձնելը, դրանից տոկոսներ վճարելը և Ավանդի հաշվից դրամական միջոցներն այլ անձանց փոխանցելը Բանկն իրականացնում է բանկային գրքույկը ներկայացնելիս:

3.5. Եթե անվանական բանկային գրքույկը կորել է կամ պիտանի չէ ներկայացնելու համար, Բանկն Ավանդատուի դիմումի հիման վրա նրան տալիս է նոր բանկային գրքույկ:

3.6. Ըստ ներկայացնողի բանկային գրքույկի կորստի դեպքում իրավունքները վերականգնում է դատարանը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, զործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

6. Այլ պայմաններ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Բանկ

ստորագրություն

Ավանդատու

ստորագրություն

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.
վայրը _____, այսուհետ՝
երաշխիք տվող կազմակերպության անվանումը
«Երաշխիք տվող», ի դեմս _____, որը գործում է _____ հիման
պաշտոնը, ազգանունը, անունը
վրա մի կողմից, և _____, այսուհետ՝ «Պրինցիպալ»
երաշխիք ստացող կազմակերպության անվանումը
(երաշխիք ստացող), ի դեմս _____, որը գործում է _____
պաշտոնը, ազգանունը, անունը
հիման վրա՝ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Երաշխիք տվողը երաշխիք է տալիս Պրինցիպալի և _____,

կապալառու կազմակերպության անվանումը
այսուհետ՝ «Կապալառու» միջև _____ թ. կնքված կապալի թիվ _____ պայմանագրի _____
կետերով Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ կատարման և Կապալառուի երաշխիքի գումարը վճարելու համար այն դեպքում, եթե Պրինցիպալը (երաշխիք ստացողը) անվճարումակության կամ այլ պատճառներով չկարողանա պատշաճ կատարել նշված պարտավորությունները:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Երաշխիք տվողը պարտավորվում է՝

2.1.1. սույն պայմանագրի 2.2.1 կետում նշված կոմիսիոն վարձատրությունը Երաշխավորի հաշվարկային հաշվին ստացվելու օրվանից _____ օրվա ընթացքում Կապալառուին հանձնել Պրինցիպալի համար գրավոր երաշխիք (այսուհետ՝ «Երաշխիք»)՝ _____ (_____) գումարով:

Կապալառուին վճարելու պարտավորությամբ, եթե Պրինցիպալը (երաշխիք ստացողը) անվճարումակության կամ այլ պատճառներով չկարողանա պատշաճ կատարել Կապալի պայմանագրի _____ կետերով սահմանված պարտավորությունները:

Երաշխիքի գումարը վճարվում է Երաշխիքը կատարելու վերաբերյալ Կապալառուի գրավոր պահանջը (այսուհետ՝ «Պահանջ») Երաշխիք տվողի կողմից ստանալուց հետո՝ _____ օրվա ընթացքում: Պահանջի հետ միասին Կապալառուին պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել պատշաճ ձևակերպված հետևյալ փաստաթղթերը՝

Երաշխիք պարտավորությունները կատարելուց հետո Երաշխիք տվողը Պրինցիպալին ձևակերպում է վարկ, երաշխիքի գումարի չափով՝ _____ ժամկետով, տարեկան _____ տոկոսով:

2.1.2. Պահանջն ստանալուց հետո՝ _____ օրվա ընթացքում, այդ մասին գրավոր տեղեկացնելով Պրինցիպալին:

2.1.3. Կապալառուին Երաշխիքի գումարը վճարելուց հետո՝ _____ օրվա ընթացքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Կազմակերպությանը:

2.1.4. Երաշխիքը կատարելուց հետո՝ _____ օրվա ընթացքում, Պրինցիպալի հետ վարել բանակցություններ՝ վերջինիս՝ սույն պայմանագրի 2.1 կետում նշված պայմաններով հատկացվող վարկը ձևակերպելու համար:

2.1.5. Երաշխիքը տրվում է _____ օր ժամկետով:

2.2. Պրինցիպալը պարտավորվում է՝

2.2.1. Երաշխիք տվողին վճարել Կոմիսիոն վարձատրություն՝ երաշխիքի գումարի _____ տոկոսի չափով:

2.2.2. Կապալառուի պահանջն ստանալու վերաբերյալ Երաշխիք տվողի հաղորդման դեպքում վերջինիս ներկայացնել Երաշխիքի կատարման անհրաժեշտությունն առաջացնող վիճակը և պատճառները բացատրող տեղեկատվություն ու փաստաթղթեր:

2.2.3. մարել Երաշխիք տվողի կողմից հատկացված վարկը՝ սույն Պայմանագրի 2.1.1 կետում նշված պայմաններով:

3. Պայմանագրի փոփոխումը և դադարումը

Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները համաձայնեցվում են Կողմերի միջև և ձևակերպվում են Պայմանագրին կից առանձին հավելվածներով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով Պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը կրում են նյութական պատասխանատվություն՝ գործող օրենսդրության համաձայն:

4.2. Եթե Երաշխիք տվողը Պրինցիպալին վարկ ձևակերպելու և այն մարելու համար սահմանված ժամկետը խախտում է, ապա Երաշխիք տվողը պարտավոր է Պրինցիպալին վճարել տուժավճար՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վարկի գումարի _____ տոկոսի չափով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

5.2. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Կապալի Պայմանագրի _____ կետերով Պրինցիպալի պարտավորությունների կատարման ավարտից հետո:

բ) Կապալի Պայմանագրի _____ կետերով իր պարտավորությունները Պրինցիպալի կողմից այլ կազմակերպությանը փոխանցելու (վերազիջելու) դեպքում:

գ) Երաշխիքի կատարման դեպքում՝ Կողմերի միջև փոխադարձ հաշվարկն ավարտելուց հետո:

6. Այլ պայմաններ

- 6.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
- 6.2. Սույն Պայմանագրին կից բոլոր հավելվածները և լրացումները դրա անբաժանելի մասն են:
- 6.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<i>Երաշխիք տվող</i>	<i>Պրինցիպալ</i>
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Բանկ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Հաճախորդ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Բանկը պարտավորվում է Հաճախորդի անունով բացել հաշիվ և այդ հաշվին մուտքագրել ստացվող դրամական միջոցները, հաշվից կատարել փոխանցումներ և բանկային այլ գործառնություններ:

1.2. Հաճախորդը բոլոր գործարքները կատարում է օրենքով սահմանված կարգով, դրան համապատասխան բանկային կանոններով ու բանկային հաշվի պայմանագրով նախատեսված փաստաթղթերը բանկին ներկայացնելու միջոցով:

1.3. Բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել Հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով նախատեսված այլ սահմանափակումներ՝ իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ:

1.4. Ժամկետում Հաճախորդին տեղեկացնել նրա հաշվով կատարված հաշվանցի մասին՝ Բանկի կողմից հաշվի վարկավորման, Բանկի ծառայությունների համար վճարի, Հաճախորդի դրամական միջոցների օգտագործման առնչությամբ:

1.5. Հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի թույլատրվում սահմանափակել, բացի օրենքով նախատեսված դեպքերի:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Բանկն իրավունք ունի՝

2.1.1. իր ծառայությունների համար վճարը վերցնել Հաճախորդի հաշվում եղած միջոցներից՝ յուրաքանչյուր գործարքի ավարտից հետո.

2.1.2. դատարան հայց ներկայացնել սույն պայմանագիրը լուծարելու մասին, եթե՝

2.1.2.1. Հաճախորդի հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պակաս է բանկային կանոններով նախատեսված նվազագույն չափից, և նման գումարը չի վերականգնվել այդ մասին Բանկի գուշակացման օրվանից _____ ընթացքում.

2.1.2.2. _____ ընթացքում տվյալ հաշվով գործառնություններ չեն կատարվել:

2.2. Բանկը պարտավոր է՝

2.2.1. բանկային հաշվի պայմանագիր կնքել Հաճախորդի հետ, եթե Հաճախորդն առաջարկել է հաշիվ բացել տվյալ տեսակի հաշիվների համար Բանկի հայտարարած պայմաններով, որոնք համապատասխանում են օրենքի պահանջներին և դրան համապատասխան ընդունված բանկային կանոններին.

2.2.2. Հաճախորդի համար հաշվարկային հաշիվ բացել այդ հաշիվը բացելու համար փաստաթղթերը ներկայացնելու օրվանից սկսած _____ բանկային օրվա ընթացքում.

2.2.3. Հաճախորդի հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը.

2.2.4. Հաճախորդի կարգադրությամբ՝ երրորդ անձանց պահանջով դրամական միջոցներ դուրս գրել հաշվից, եթե կարգադրության մեջ նշված են անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում Բանկին՝ համապատասխան պահանջ ներկայացնելիս նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող անձին.

2.2.5. Հաճախորդի կարգադրությամբ գործարքներ կատարել ոչ ուշ, քան համապատասխան փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը.

2.2.6. Հաճախորդի համար կատարել նրա հաշվի տեսակի համար օրենքով և դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով ու բանկային գործունեության մեջ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով նախատեսված գործառնություններ.

2.2.7. Հաճախորդի հաշվում գտնվող դրամական միջոցներից օգտվելու համար յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, Հաճախորդին վճարել նրա հաշվին գտնվող դրամական միջոցների _____ (_____) տոկոսի չափով գումար, որը _____ (_____) օրվա ընթացքում պետք է մուտքագրվի Հաճախորդի հաշվարկային հաշվում.

2.2.8. հաշվանց կատարելուց հետո _____ բանկային օրվա ընթացքում, Հաճախորդին տեղեկացնել կատարված հաշվանցի մասին.

2.2.9. երաշխավորել հաշվի, հաշվով գործառնությունների և Հաճախորդի մասին տեղեկությունների գաղտնիությունը և նման տեղեկություններ տրամադրել միայն Հաճախորդին և նրա լիազոր ներկայացուցչին:

Պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց նման տեղեկություններ կարող են տրամադրվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում:

2.3. Հաճախորդն իրավունք ունի՝

2.3.1. Բանկի կողմից բանկային հաշվի պայմանագիր կնքելուց անհիմն խուսափելու դեպքում, Բանկ ներկայացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 461 հոդվածով սահմանված պահանջներ.

2.3.2. կարգադրել Բանկին իր հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց.

2.3.3. բանկային գաղտնիք համարվող տեղեկությունները Բանկի կողմից հրապարակվելու դեպքում Բանկից պահանջել պատճառված վնասների հատուցում.

2.3.4. ցանկացած ժամանակ լուծարել սույն պայմանագիրը:

2.4. Հաճախորդը պարտավոր է՝

2.4.1. երրորդ անձանց պահանջով իր հաշվին դրամական միջոցներ դուրս գրելու կարգադրություններում նշել

անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն համապատասխան պահանջը ներկայացնելիս նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող այլ անձին:

2.4.2. վճարել Բանկին՝ նրա կատարած ծառայությունների համար:

3. Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու հերթականությունը

3.1. Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն):

3.2. Հաճախորդի կարգադրությունները և նրան ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար հաշվում դրամական միջոցների անբավարարվածության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում հետևյալ հաջորդականությամբ՝

3.2.1. կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հետ կապված, ինչպես նաև ալիմենտներ բռնագանձելու վերաբերյալ պահանջները բավարարելու համար կատարողական փաստաթղթով նախատեսված դրամական միջոցների փոխանցումները կամ վճարումները:

3.2.2. աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց, արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրության վճարումների հաշվարկների համար կատարողական փաստաթղթով նախատեսված դրամական միջոցների փոխանցումները կամ վճարումները:

3.2.3. վճարային փաստաթղթերով պետական բյուջե և համայնքային բյուջեներ կատարվող վճարները:

3.2.4. կատարողական փաստաթղթով նախատեսված այլ դրամական պահանջները բավարարելու համար վճարները:

3.2.5. այլ փաստաթղթերով վճարները՝ ըստ դրանց ներկայացման օրացուցային հաջորդականության:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Հաճախորդի անունով մուտք եղած դրամական միջոցները նրա հաշվին ժամանակին չմուտքագրելու կամ դրանք նրա հաշվից անհիմն դուրս գրելու, ինչպես նաև դրամական միջոցները փոխանցելու կամ դրանք վճարելու մասին ցուցումները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում Բանկը պարտավոր է այդ գումարից տուկոսներ վճարել Հաճախորդին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված կարգով և չափով:

4.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Այլ պայմաններ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկայինն վավերապայմանները և ստորագրությունները

Բանկ	Հաճախորդ
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

ԲԵՌՆԱՓՈՒՆԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Առաքող», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Փոխադրող», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Փոխադրողը պարտավորվում է Առաքողի կողմից իրեն վստահված բեռը հասցնել սույն պայմանագրի 1.3 կետում նշված վայր և այն հանձնել սույն պայմանագրի 1.4 կետում նշված՝ բեռի ստացման համար լիազորված անձին, իսկ Առաքողը պարտավորվում է վճարել բեռի փոխադրման համար սահմանված վարձը:

1.2. Համաձայն սույն պայմանագրի, բեռ է համարվում՝ _____, այսուհետ՝ «Բեռ»: Բեռի ընդհանուր զանգվածը կազմում է _____ (_____):

1.3. Սույն պայմանագրով նշանակման վայր է համարվում _____, այսուհետ՝ «Նշանակման վայր»:

1.4. Բեռի ստացման համար լիազորված անձ է՝ _____ այսուհետ՝ «Ստացող».

_____ ազգանունը, անունը, պաշտոնը
Ստացողի լիազորությունները հաստատվում են _____:
_____ փաստաթղթերը

1.5. Առաքողի կողմից Փոխադրողին Բեռի հանձնման վայր է համարվում _____, այսուհետ՝ «Հանձնման վայր»:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Փոխադրողը պարտավոր է՝

2.1.1. որոշել Բեռի փոխադրումն իրականացնելու համար տրանսպորտային միջոցների քանակը և դրանց տիպերը.

2.1.2. Առաքողի հայտով՝ բեռնման նպատակով նրան տրամադրել համապատասխան բեռի փոխադրման համար պիտանի ու սարքին տրանսպորտային միջոցներ, որոնք համապատասխանում են սահմանված նորմերին.

2.1.3. Բեռը հասցնել նշանակման վայր և այն հանձնել Ստացողին ոչ ուշ, քան _____ օրվա ընթացքում:

2.2. Առաքողը պարտավոր է՝

2.2.1. մինչև Հանձնման վայր տրանսպորտային միջոցների հասնելը Բեռը նախապատրաստել փոխադրման.

2.2.2. մինչև բեռնելը ստուգել Բեռի փոխադրման համար տրանսպորտային միջոցների պիտանիությունը.

2.3. Առաքողն իրավունք ունի հրաժարվել տվյալ բեռի փոխադրման համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցներից:

3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1. Փոխադրման գինը կազմում է _____ (_____) դրամ:

3.2. Բեռնման և բեռնաթափման ծառայության վճարի չափը կազմում է _____ (_____) դրամ:

3.3. Պայմանագրի գինը կազմում է _____ (_____) դրամ:

3.4. Առաքողի կողմից սույն պայմանագրի գումարը վճարվում է Փոխադրողին և ոչ ուշ, քան « _____ » _____ թ.:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Փոխադրողը, Առաքողը և բեռ փոխադրողը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման համար պատասխանատվություն են կրում՝ օրենքով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

4.2. Բեռ փոխադրողը և Առաքողն ազատվում են տրանսպորտային միջոցները չտրամադրելու կամ տրամադրված տրանսպորտային միջոցները չօգտագործելու համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել՝

4.2.1. անհաղթահարելի ուժի (հրդեհների, ջրհեղեղների և այլնի) ազդեցության հետևանքով.

4.2.3. օրենքով սահմանված այլ դեպքերում:

4.3. Փոխադրողը պատասխանատվություն է կրում բեռի կորստի, պակասորդի, վնասվածքի համար, որը տեղի է ունեցել այն փոխադրման համար ընդունելուց հետո, մինչև բեռը ստացողին հանձնելը, եթե չի ապացուցում, որ դրանք տեղի են ունեցել այնպիսի հանգամանքներում, որոնք Փոխադրողը չէր կարող կանխել, և որոնց վերացնելը իրենից կախված չէր:

4.4. Բեռի փոխադրման ժամանակ պատճառված վնասը Փոխադրողը հատուցում է՝

4.4.1. բեռի կորստի կամ պակասորդի դեպքում՝ կորած կամ պակասած բեռի արժեքի չափով.

4.4.2. բեռի վնասվածքի դեպքում՝ այն գումարի չափով, որով նվազել է դրա արժեքը, իսկ վնասված բեռի վերանորոգման անհնարինության դեպքում՝ դրա արժեքի չափով.

4.4.3. արժեքի հայտարարմամբ փոխադրման հանձնված բեռի կորստի դեպքում՝ դրա հայտարարված արժեքի չափով:

4.2. Տույժի վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց:

4.3. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը ևս:

4.4. Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվելին Գույքը գնելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

Գույքի վարձակալության ժամկետն սկսվում է _____-ից և ավարտվում է _____-ին:

6. Վարձակալած Գույքի բարելավումները

6.1. Վարձակալած Գույքից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

6.2. Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այլ բարելավումների արժեքի չափով:

6.3. Վարձակալի կողմից առանց Վարձատուի համաձայնության կատարած վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6.4. Վարձակալած Գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականությունը:

7. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

7.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

7.1.1. Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով:

7.1.2. Էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը:

7.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը:

7.1.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել գույքի ընթացիկ վերանորոգումը:

7.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծարվել, եթե՝

7.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

7.2.2. Վարձակալին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չէր կարող հայտնաբերել պայմանագիրը կնքելիս:

8. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննության:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

10. Եզրափակիչ դրույթներ

10.1. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից: Սույն պայմանագրին կից հավելվածները դրա անբաժանելի մասն են:

10.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբա-

նական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

11. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու

ստորագրություն

Վարձակալ

ստորագրություն

ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրա-
պետմանը և օգտագործմանը հանձնել ոչ բնակելի տարածք(ներ), որոնք տեղակայված են
_____ հասցեում (այսուհետ՝ «Օբյեկտ»)՝ իր

նշել հասցեն

կանոնադրությանը համապատասխան գործունեություն իրականացնելու համար:

Ենթավարձակալության հանձնվող տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է _____
(_____) քառակուսի մետր:

1.2. Սույն պայմանագիրը գործում է « _____ » _____ թ.-ից մինչև « _____ » _____ թ.:

1.3. Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում Վարձատուն կորցնում է Օբյեկտից օգտվելու
իրավունքը:

1.4. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Օբյեկտի օգտագործման արդյունքում Վարձակալի ստա-
ցած եկամուտները նրա սեփականությունն են:

1.5. Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը վաճառված, գրավ դրր-
ված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի
տակ չի գտնվում:

1.6. Օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լու-
ծարելու կամ փոխարինելու համար:

1.7. Օբյեկտի վարձակալության հանձնելը հիմք չէ դրա նկատմամբ երրորդ անձանց իրավունքները դադարեց-
նելու կամ փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. պահանջել Վարձակալից Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել մու-
ծելու վարձավճարը.

2.1.3. եթե Վարձակալն Օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամա-
պատասխան, պահանջել լուծարելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Օբյեկտը Վարձակալին հանձնել պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 5 (հինգ) օրվա ընթացքում՝
հանձնման-ընդունման ակտով:

2.2.2. իրեն հայտնի դառնալու պես, Վարձակալին անհապաղ գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու ան-
հրաժեշտության մասին՝ կապված Օբյեկտը հիմնական վերանորոգման կամ քաղաքաշինական նկատառումներով
քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ.

2.2.3. Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համա-
պատասխանող վիճակում՝ դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով.

2.2.4. իր հաշվին կատարել Օբյեկտի հիմնական վերանորոգումը.

2.2.5. Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բո-
լոր իրավունքների մասին.

2.2.6. Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Օբյեկտի թերությունները կամ համաչափ իջեցնել
վարձավճարը.

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 2.2.1 կետով սահմանված ժամկետում իրեն տրամադրել
Օբյեկտը. նրա պատկանելիքներով ու փաստաթղթերով.

2.3.2. Օբյեկտի օգտագործմանը ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս,
իր ընտրությամբ՝

2.3.3.1. Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճա-
րը կամ հատուցելու թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.4. սույն պայմանագրի 2.2.6 կետում նշված Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու
պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.4.1. Կատարել անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և Վարձատուից
պահանջել վերանորոգման արժեքը.

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան.

2.4.2. ժամանակին մուծել Օբյեկտն օգտագործելու համար՝ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված վճա-
րը.

2.4.3. Օբյեկտը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Օբ-
յեկտը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.

2.4.4. պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Օբյեկտն իր կողմից ստացված

վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը.

2.4.5. ապահովել Օբյեկտի ճարտարագիտական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը.

2.4.6. վարձակալված տարածքներում պահպանել սանիտարա-հակահամաճարակային, հակահրդեհային պահանջները, ինչպես նաև այն կանոնները և նորմերը, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի ու իր վարձակալված Օբյեկտի նկատմամբ.

2.4.7. Վարձատուին անմիջապես տեղեկացնել ամեն մի վնասվածքի, ինչպես նաև վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Օբյեկտին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի, ինչպես նաև Օբյեկտի հետագա վնասման կանխարգելման ուղղությամբ.

2.4.8. ժամանակին մուծել կոմունալ ծառայությունների և Օբյեկտում տեղադրված հեռախոսային հաշիվների վճարները.

2.4.9. առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել պայմանագրեր և չմտնել օբյեկտի հետ կապված գործարքների մեջ: Առանց նշված համաձայնության, Վարձակալի կողմից նման պայմանագրեր կնքելը կամ նման գործարքներ կատարելը պայմանագիրը միակողմանիորեն լուծարելու հիմք է.

2.4.10. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված շենքի սպասվելիք ազատման մասին՝ այդ թվում՝ կապված պայմանագրի ժամկետն ավարտվելու հետ.

2.4.11. Օբյեկտն ազատելու ժամանակ այն հանձնել ակտով՝ սարքին վիճակում, հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.

2.4.12. սահմանված ժամկետում կատարել Վարձատուի կարգադրությունները՝ ուղղված Վարձակալի գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգ են սպառնում Օբյեկտին, վարձակալված տարածքի բնապահպանական և սանիտարական իրավիճակին:

3. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները

3.1. Օբյեկտի օգտագործման համար ամսեկան վարձավճարը կազմում է _____ (_____) դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, որը կազմում է _____ (_____) դրամ: Վարձավճարը վճարում է _____ և այն ենթակա չէ միակողմանի փոփոխման:

հստակապահությունը

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրի պայմանները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում մեղավոր կողմը պարտավոր է փոխհատուցել պատճառված վնասները:

4.2. Պայմանագրի 3.1 կետի պահանջը Վարձակալի կողմից խախտելու դեպքում կետանցի յորաքանչյուր օրվա համար հաշվեգրվում է տուժավճար՝ ժամկետանց գումարի _____ տոկոսի չափով:

4.3. Պայմանագրի այլ պայմանները խախտելու դեպքում մեղավոր կողմը վճարում է տուժավճար՝ եռամսյակային վարձավճարի գումարի _____ տոկոսի չափով:

4.4. Տուժավճարի մուծումը Կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց:

4.5. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

5. Պայմանագրի փոփոխումը, լուծարումը, գործողության դադարումը

5.1. Պայմանագրի գործողությունը դադարում է դրա ժամկետն ավարտվելուց հետո, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ սահմանված ցանկացած այլ ժամկետում:

Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրերով:

5.2. Վարձատուն կարող է միակողմանիորեն լուծարել պայմանագիրը, եթե՝

5.2.1. գոյացել է պայմանագրով նախատեսված վարձավճարի երեք ամսից ավելի պարտք: Պայմանագրի լուծումը Վարձակալին չի ազատում վարձավճարի և տուժավճարի մուծման գծով պարտքերի մարման պարտականությունից:

5.2.2. Վարձակալը դիտավորյալ կամ անզուշորեն վատթարացրել է Օբյեկտի կամ դրա ինժեներական սարքավորումների վիճակը:

5.3. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծարվել, եթե՝

5.3.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Օբյեկտը կամ խոչընդոտներ է ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին համապատասխան օգտագործելու համար:

5.3.2. Վարձակալին հանձնված Օբյեկտն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին:

5.3.3. Այլ հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Օբյեկտը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

6. Վարձակալված Օբյեկտի բարելավումները

6.1. Վարձակալված Օբյեկտից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

6.2. Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին կատարել է վարձակալված Օբյեկտից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով, որը որոշվում է փոխհամաձայնությամբ:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄՍԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության

հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

9. Այլ պայմաններ

9.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու

ստորագրություն

Վարձակալ

ստորագրություն

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.
վայրը _____, այսուհետ՝
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
«Երաշխավոր», ի դեմս (եթե իրավաբանական անձ է) _____, որը գործում է
_____ ազգանունը, անունը, պաշտոնը
_____ հիման վրա, մի կողմից, և _____
կանոնադրության, լիազորագրի կամ այլնի _____ կազմակերպության անվանումը
_____ , այսուհետ՝ «Պարտատեր», ի դեմս _____
կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը _____ պաշտոնը, ազգանունը, անունը
_____ , որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից,
կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Երաշխավորը պարտավորվում է Պարտատիրոջ առջև պատասխանատվություն կրել՝ Պարտատիրոջ և Պարտապանի միջև _____ թ. կնքված _____ պայմանագրի առարկան _____ թիվ _____ պայմանագրով՝ _____, այսուհետ՝ «Պարտապան», պարտապան իր. անձի անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը պարտավորությունների կատարման համար:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Երաշխավորը պարտավորվում է պարտատիրոջ առջև պատասխանատվություն կրել սույն պայմանագրի 1.1 կետում նշված՝ Պարտապանի պարտականությունների կատարման համար նույն ծավալով, ինչ Պարտապանը:

2.2. Երաշխավորը պարտավոր է սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմանագրի _____ կետով սահմանված՝ վճարման ժամկետը սկսվելու պահից Պարտատիրոջը _____ օրվա ընթացքում վճարել Պարտապանի չվճարած գումարը, ինչպես նաև սույն պայմանագրի _____ կետում նշված պայմանագրի _____ կետով նախատեսված տուժանքը:

Տուժանքը չի վճարվում, եթե Երաշխավորը վարկային պայմանագրի _____ կետով սահմանված ժամկետներում կատարել է վճարումը:

2.3. Եթե Երաշխավորը սույն պայմանագրի 2.2 կետի համաձայն չկատարի իր պարտավորությունը, ապա Երաշխավորը Պարտատիրոջը վճարում է լրացուցիչ տուժավճար՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար _____ տոկոսի չափով:

2.4. Պարտատերը պարտավոր է Երաշխավորին հանձնել Պարտապանի դեմ ունեցած իր պահանջները հավաստող փաստաթղթերը և փոխանցել այդ պահանջն ապահովող իրավունքները՝ սույն պայմանագրի 2.2 կետում նշված պարտավորությունները Երաշխավորողի կողմից կատարելու պահից _____ օրվա ընթացքում:

2.5. Պարտատիրոջ կողմից Երաշխավորին՝ վերջինիս ներկայացրած ցանկի համաձայն անհրաժեշտ փաստաթղթերը չհանձնելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար Պարտատերը Երաշխավորին վճարում է տուժավճար՝ _____ տոկոսի չափով:

3. Ժամկետները

Երաշխավորությունը դադարում է, եթե Պարտատերը պայմանագրի 1.1 կետում նշված պարտավորությունների կատարման ժամկետը սկսվելու օրվանից երեք ամսվա ընթացքում Երաշխավորին չի ներկայացնում վճարման գրավոր պահանջ:

4. Լրացուցիչ պայմաններ

Պարտապանը պարտավոր է Երաշխավորին հանձնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմանագրի մեկ օրինակը:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Երաշխավոր՝ _____
_____ հասցեն և վավերապայմանները

Պարտատեր՝ _____
_____ հասցեն և վավերապայմանները

Ստորագրություններ և կնիքներ

Երաշխավոր՝ _____
_____ ստորագրությունը և կնիքը

Պարտատեր՝ _____
_____ ստորագրությունը և կնիքը

Պարտապան՝ _____
_____ ստորագրությունը և կնիքը

**ԼԻԱԶՈՐԱԳՐԻ ՏԻՊԱՅԻՆ
ՁԵՎ**

_____ իր աշխատակից

_____ պաշտոնը, ազգանունը, անունը, անձնագրի տվյալները
լիազորում է ներկայացնել բանկը՝ _____ -ում
սակարանի (բորսայի) անվանումը

արժեթղթերով գործարքներ կատարելու համար:
Բանկի անունից սույն աշխատակցի կողմից կնքված արժեթղթերով գործարքի իրավունքները և պարտականո-
թյունները պատկանում են բանկին:

Մեր բանկի աշխատակից _____
ազգանունը, անունը _____ ստորագրության նմուշը _____
ստորագրությունը **ՀԱՎԱՍՏՈՒՄ ԵՆՔ:**

Սույն լիազորագիրը տրված է «_____» _____ թ. և գործում է մինչև «_____» _____ թ.:

Բանկի կառավարիչ _____
(ստորագրությունը)

Բանկի գլխավոր հաշվապահ _____
(ստորագրությունը)

Կ.Տ.

**ԼԻԱԶՈՐԱԳԻՐ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՈՒՆԻՑ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

_____ «_____» _____ թ.
վայրը
Սույն լիազորագրով _____,

կազմակերպության անվանումը, հասցեն
ի դեմս՝ _____, որը գործում է _____ հիման վրա
ազգանունը, անունը, պաշտոնը

լիազորում է _____,
ազգանունը, անունը _____ ստորագրությունը _____

_____ անձնագրի սերիան, համարը, երբ է տրված և ում կողմից _____ պայմանով

նշել պայմանագրային պայմանը կամ՝ «Իր հայեցողությամբ» արտահայտությունը
կատարելու բոլոր անհրաժեշտ գործողությունները, որոնք կապված են սույն հանձնարարության կատարման հետ:
Սույն լիազորագիրը տրված է _____ ժամկետով _____
վերավստահության կամ առանց վերավստահության իրավունքի

_____ լիազորողի ստորագրությունը

Կ.Տ.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կատարող», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝ _____

այսուհետ՝ «Ծառայություններ»:

1.3. Աշխատանքների կատարման ժամկետն է՝ « _____ » թ. մինչև « _____ » թ.:

1.3.1. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման- ընդունման ակտի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում կամ ժամկետից շատ՝ Պատվիրատուի համաձայնությամբ.

2.1.3. Պատվիրատուի պահանջով _____ օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան, Ծառայությունների հանման- ընդունման ակտի ստորագրման պահից _____ (_____) օրվա ընթացքում.

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է՝ _____ (_____) դրամ:

3.2. Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գնի _____ տոկոսը վճարվում է որպես կանխավճար, իսկ մնացած մասը վճարվում է սույն պայմանագրի կատարումից և հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո՝ 5 օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի 1.3 կետում նշված Ծառայությունների մատուցման կամ 3.2 կետում նշված վճարման ժամկետների խախտման համար խախտող կողմը մյուս կողմին վճարում է տուգանք՝ պայմանագրի արժեքի _____ տոկոսի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար _____ տոկոսի չափով:

4.2. Տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները նրա անբաժանելի մասն են:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

ստորագրություն

Կատարող

ստորագրություն

ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը
հ ի -
ման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել _____,

աշխատանքի նկարագրությունը

իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վճարել դրա համար:

1.2. Կապալառուն Աշխատանքը կատարում է _____:

միջոցները

1.3. Աշխատանքի կատարման ժամկետն է « _____ » _____ թ. ինչև « _____ » _____ թ.: Կապալառուն իրավունք ունի աշխատանքն ավարտել ժամկետից շուտ՝ Պատվիրատուի համաձայնությամբ:

1.4. Աշխատանքը համարվում է կատարված՝ Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց հետո:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կատարած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում սույն պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա՝ ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

2.1.3. եթե աշխատանքի կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի կատարվելու՝ ողջամիտ ժամկետ նշանակել Կապալառուի թույլ տված թերությունները վերացնելու համար և, եթե այդ ժամկետում Կապալառուն չի վերացնում թերությունները, հրաժարվել կապալի պայմանագրից և Կապալառուի հաշվին թերությունների վերացումը հանձնարարել այլ անձանց, ինչպես նաև պահանջել հատուցելու վնասները.

2.1.4. մինչև աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները.

2.1.5. աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 722 հոդվածում սահմանված երաշխիքային ժամկետում.

2.1.6. առանց կատարված աշխատանքը վարձատրելու, ինչպես նաև վնասները հատուցելու՝ պահանջել լուծարելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է այնպիսի աշխատանքի կատարման պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները

2.1.7. աշխատանքի արդյունքն ընդունելու կամ այն օգտագործելու ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 723 հոդվածով սահմանված ժամկետում, իր ընտրությամբ, Կապալառուից պահանջել՝

ա) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու թերությունները.

բ) համաչափորեն նվազեցնելու աշխատանքի համար սահմանված գինը.

գ) հատուցելու թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը.

2.1.8. Աշխատանքի արդյունքն ընդունելուց հետո՝ 10 (տասը) տարվա ընթացքում, դրանում Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնել այդ թերությունները կամ վերադարձնել աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցել իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով աջակցել Կապալառուին՝ աշխատանքները կատարելիս.

2.2.2. 1.1. կետում նշված աշխատանքի կատարման համար մինչև « _____ » _____ թ. Կապալառուին տրամադրել անհրաժեշտ նախագծային և նախահաշվարկային փաստաթղթեր:

2.2.3. սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կապալառուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից՝ աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

2.2.4. Աշխատանքն ընդունելուց հետո, Աշխատանքի արդյունքում պայմանագրից այնպիսի շեղումներ կամ թերություններ հայտնաբերելու դեպքում, որոնք չէին կարող հայտնաբերվել ընդունման սովորական եղանակի ժամանակ (թաքնված թերություններ), ներառյալ՝ այնպիսիք, որոնք Կապալառուն թույլ է տվել դիտարկելու, դրանք հայտնաբերելուց հետո՝ 2.1.8. կետում նշված ժամկետում, այդ մասին հայտնել Կապալառուին:

2.3. Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1. կատարված աշխատանքի արդյունքն ստանալու համար Պատվիրատուի չներկայանալու կամ այն ընդունելուց խուսափելու դեպքերում Պատվիրատուին գրավոր գաղափարներ և գաղափարներ օրվանից երկու ամիս անց

վաճառել աշխատանքի արդյունքը, իսկ ստացված գումարը, իրեն հասանելիք վճարները պահելուց հետո, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 266 հոդվածով սահմանված կարգով մուծել նոտարի կամ դատարանի դեպոզիտ:

2.4. Կապալառուն պարտավոր է՝

2.4.1. մինչև սույն պայմանագիրը կնքելը՝ պատվիրատուին անհրաժեշտ և հավաստի տեղեկատվություն տրամադրել առաջարկվող աշխատանքի, դրա տեսակների և առանձնահատկությունների, գնի և վճարման ձևի մասին, ինչպես նաև պատվիրատուի ցանկությամբ նրան հաղորդել աշխատանքին վերաբերող այլ տեղեկություններ:

2.4.2. Աշխատանքը կատարել պատշաճ որակով:

2.4.3. Աշխատանքի արդյունքը հանձնել Պատվիրատուին:

2.4.4. Աշխատանքի արդյունքը պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

2.4.5. Պատվիրատուի պահանջով _____ (_____) օրվա ընթացքում անհատույց վերացնել բոլոր բացահայտված թերությունները, եթե Կապալառուն Աշխատանքի կատարման ընթացքում պայմանագրի պայմաններից թույլ է տվել շեղումներ, որոնք վատթարացրել են Աշխատանքի որակը:

2.4.6. Աշխատանքը կատարել անձամբ:

3. Աշխատանքի գինը և վարձատրությունը

3.1. Աշխատանքի գինը որոշվում է կողմերի համաձայնությամբ հաստատված նախահաշվով և կազմում է _____ (_____) դրամ, որից _____ (_____) դրամը Պատվիրատուն պայմանագիրը կնքելիս վճարում է Կապալառուին՝ որպես նախավճար, որը հաշվարկվում է աշխատանքի ընդհանուր գնի մեջ:

3.2. Աշխատանքի գինը (նախահաշիվը) կայուն է, և կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

3.3. Եթե Կապալառուի փաստացի ծախսերը պակաս են այն գումարից, որը հաշվի է առնվել աշխատանքի գինը որոշելիս, Կապալառուն պահպանում է նախկին պայմաններով նախատեսված վարձատրություն ստանալու իրավունքը, եթե Պատվիրատուն չի ապացուցում, որ Կապալառուի կատարած խնայողությունն ազդել է աշխատանքի որակի վրա:

3.4. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի 2.1. կետով սահմանված գինը Կապալառուին վճարել աշխատանքի արդյունքներն ընդունելուց հետո, եթե աշխատանքը կատարված է պատշաճ որակով, սույն պայմանագրով սահմանված ժամկետում կամ ժամկետից շուտ՝ Պատվիրատուի համաձայնությամբ:

3.5. Սույն պայմանագրի կատարման կապակցությամբ Կապալառուին հասանելիք՝ 2.1 կետով սահմանված գինը վճարելու պարտականությունը Պատվիրատուի կողմից չկատարվելու դեպքում Կապալառուն իրավունք ունի պահել աշխատանքի արդյունքը մինչև Պատվիրատուն համապատասխան գումարը վճարի:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. սույն պայմանագրի 1.1 կետում նշված Աշխատանքի կատարման ժամկետների խախտման դեպքում Կապալառուն Պատվիրատուին վճարում է տուգանք՝ պայմանագրի գումարի _____ (_____) տոկոսի չափով, և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի գումարի _____ (_____) տոկոսի չափով:

4.2. տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց վրա դրված պարտավորությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄՍԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Պատվիրատուի և Կապալառուի միջև աշխատանքի թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած կողմի պահանջով կարող է նշանակվել փորձաքննություն, որի ծախսերը կրում է փորձաքննություն պահանջած կողմը, իսկ եթե փորձաքննությունը նշանակվել է երկու կողմերի համաձայնությամբ, ապա ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրվելուց հետո և գործում է մինչև «___» _____ թ.:

8. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

ստորագրություն

Կապալառու

ստորագրություն

ԿԱՊԻՏԱԼ ԸԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Կապալառու պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել _____,

աշխատանքի նկարագրությունը

իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1. Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2. Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2. հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում սույն պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

3.1.3. եթե աշխատանքի կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի կատարվելու, ողջամիտ ժամկետ նշանակել Կապալառուի թույլ տված թերությունները վերացնելու համար, և եթե այդ ժամկետում Կապալառուն չի վերացնում թերությունները՝ հրաժարվել կապալի պայմանագրից և Կապալառուի հաշվին թերությունների վերացումը հանձնարարել այլ անձանց, ինչպես նաև պահանջել հատուցելու վնասները.

3.1.4. մինչև աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները.

3.1.5. աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 722 հոդվածում սահմանված երաշխիքային ժամկետում.

3.1.6. առանց կատարված աշխատանքը վարձատրելու, ինչպես նաև վնասները հատուցելու, պահանջել լուծարելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է այնպիսի աշխատանքի կատարման պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7. աշխատանքի արդյունքն ընդունելու կամ այն օգտագործելու ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 723 հոդվածով սահմանված ժամկետում, իր ընտրությամբ, Կապալառուից պահանջել՝

ա) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել թերությունները.

բ) համաչափորեն նվազեցնել աշխատանքի համար սահմանված գինը.

գ) հատուցել թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը.

3.1.8. աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ _____ տարվա ընթացքում Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. աշխատանքները կատարելիս աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2. Կապալառուին հանձնել սահմանված կարգով հաստատված նախագծային-նախահաշվային փաստաթղթերը.

3.2.3. ապահովել շինարարության ֆինանսավորումը և անընդհատությունը.

3.2.4. սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.5. աշխատանքն ընդունելուց հետո, աշխատանքի արդյունքում պայմանագրից այնպիսի շեղումներ կամ թերություններ հայտնաբերելու դեպքում, որոնք չէին կարող հայտնաբերվել ընդունման սովորական եղանակի ժամանակ (թաքնված թերություններ), ներառյալ՝ այնպիսիք, որոնք Կապալառուն թույլ է տվել դիտավորյալ, 3.1.8. կետում նշված ժամկետում, այդ մասին հայտնել Կապալառուին:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1. կատարված աշխատանքի արդյունքն ստանալու համար Պատվիրատուի չներկայանալու կամ այն ընդունելուց խուսափելու դեպքերում Պատվիրատուին գրավոր գաուշացնել և՛ գաուշացման օրվանից երկու ամիս անց

վաճառել աշխատանքի արդյունքը, իսկ ստացված գումարը, իրեն հասանելիք վճարները պահելուց հետո, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 266 հոդվածով սահմանված կարգով մուծել նոտարի կամ դատարանի դեպոզիտ:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1. մինչև սույն պայմանագիրը կնքելը Պատվիրատուին անհրաժեշտ և հավաստի տեղեկատվություն տրամադրել առաջարկվող աշխատանքի, դրա առանձնահատկությունների, գնի և վճարման ձևի մասին, ինչպես նաև Պատվիրատուի ցանկությամբ նրան հաղորդել աշխատանքին վերաբերող այլ տեղեկություններ:

3.4.2. ապահովել շինմունտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմատիվներին և կանոններին համապատասխան:

3.4.3. իրականացնել իր կողմից մոնտաժված սարքավորման անհատական փորձարկումը:

3.4.4. աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

4. Աշխատանքի գինը և վարձատրությունը

4.1. Աշխատանքի գինը որոշվում է կողմերի համաձայնությամբ հաստատված նախահաշվով և կազմում է _____ (_____) դրամ, որից _____ (_____) դրամը Պատվիրատուն վճարում է Կապալառուին՝ որպես կանխավճար:

4.2. Աշխատանքի գինը կայուն է, և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.3. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի 4.1 կետում սահմանված գինը Կապալառուին վճարել աշխատանքի արդյունքներն ընդունելուց հետո, եթե աշխատանքը կատարված է պատշաճ որակով, սույն պայմանագրով սահմանված ժամկետում կամ ժամկետից շուտ՝ Պատվիրատուի համաձայնությամբ:

4.4. Սույն պայմանագրի կատարման կապակցությամբ Կապալառուին հասանելիք՝ 4.1 կետում սահմանված գինը վճարելու պարտականությունը Պատվիրատուի կողմից չկատարելու դեպքում Կապալառուն իրավունք ունի պահել աշխատանքի արդյունքը մինչև Պատվիրատուն համապատասխան գումարը վճարի:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱՇՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Պատվիրատուի և Կապալառուի միջև աշխատանքի թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած կողմի պահանջով նշանակվում է փորձաքննություն: Փորձաքննության ծախսերը կրում է փորձաքննություն պահանջած կողմը, իսկ եթե փորձաքննությունը նշանակվել է երկու կողմերի համաձայնությամբ, ապա ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև « _____ » _____ թ.:

8. Այլ պայմաններ

8.1. Սույն պայմանագիրը կատարելիս կողմերը ղեկավարվում են կապիտալ շինարարության կապալի պայմանագրի մասին կանոններով, գործող օրենսդրությամբ, կապիտալ շինարարության նորմատիվ ակտերով և սույն պայմանագրի հատուկ պայմաններով:

8.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

ստորագրություն

Կապալառու

ստորագրություն

ԿՈՄԻՍԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կոմիսիոներ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կոմիտենտ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Կոմիսիոները պարտավորվում է Կոմիտենտի հանձնարարությամբ, վարձատրությամբ, իր անունից, սակայն Կոմիտենտի հաշվին, կնքել հետևյալ գործարքները՝

1.2. Ապրանքների քանակը, գինը, որակը և տեսակը որոշվում են թիվ 1 հավելվածին համապատասխան, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

1.3. Երրորդ անձի հետ Կոմիսիոների կնքած գործարքներից բխող բոլոր իրավունքները և պարտականությունները պատկանում են Կոմիսիոներին, թեկուզև, Կոմիտենտը նշվել էր գործարքում, կամ, ի կատարումն գործարքի, երրորդ անձանց հետ մտել էր անմիջական հարաբերությունների մեջ:

1.4. Կոմիտենտի համար Կոմիսիոների ձեռք բերած ապրանքները Կոմիտենտի սեփականությունն են:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կոմիտենտը պարտավոր է՝

2.1.1. Կոմիսիոներից ընդունել հանձնարարությամբ ամբողջ կատարվածը.

2.1.2. զննել Կոմիսիոների կողմից իր համար ձեռք բերված ապրանքները և դրանցում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Կոմիսիոներին.

2.1.3. Կոմիսիոներին ազատել երրորդ անձանց առջև հանձնարարությունը կատարելու նպատակով իր կողմից ստանձնած պարտականություններից.

2.1.4. հատուցել հանձնարարության կատարման նպատակով Կոմիսիոների կրած ծախսերը.

2.1.5. սույն պայմանագրի ստորագրման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Կոմիսիոների հաշվարկային հաշվին փոխանցել 1.1 կետին համաձայն ապրանքների գնման համար անհրաժեշտ դրամական գումարը.

2.1.6. հաշվետվությունն ստանալու պահից 10 (տասը) օրվա ընթացքում Կոմիսիոների հետ կատարել վերջնահաշվարկ:

2.2. Կոմիսիոները պարտավոր է՝

2.2.1. երկու շաբաթ առաջ Կոմիտենտին ծանուցել նրա առաջարկած պայմաններով գործարքների կնքմանը խոչընդոտող չնախատեսված հանգամանքների առկայության մասին.

2.2.2. Կոմիտենտին կամ նրա նշած ցանկացած անձին ապրանքները հասցնելու նպատակով դրանք հանձնել փոխադրողին.

2.2.3. գործարքը կնքելու պահից 3 (երեք) օրվա ընթացքում Կոմիտենտին ծանուցել կնքված գործարքի մասին.

2.2.4. գործարքի կնքման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Կոմիտենտին ծանուցել կնքված գործարքի մասին.

2.3. Գործարքը կնքել Կոմիտենտի համար առավել շահավետ պայմաններով: Եթե առավել շահավետ պայմանները որոշելիս նա չի կարող անմիջապես կապվել Կոմիտենտի հետ նրանից ցուցումներ ստանալու նպատակով, ապա Կոմիսիոներն իրավունք ունի շեղվել Կոմիտենտի ցուցումներից և ինքնուրույն ընդունել որոշում՝ առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնելով Կոմիտենտին: Այս դեպքում այդ գործարքով ամբողջ ստացածն անցնում է Կոմիտենտին:

2.4. Հաշվետվության վերաբերյալ առարկությունների դեպքում Կոմիտենտը պարտավոր է երեք ամսվա ընթացքում այդ մասին տեղեկացնել Կոմիսիոներին: Առարկությունների բացակայության դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված:

3. Հաշվարկներ կատարելու ժամկետը և կարգը

3.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների կատարումը:

3.2. Կոմիսիոների վարձատրությունը սահմանվում է _____ (_____) դրամի չափով:

3.3. Կոմիսիոների ներկայացրած հաշվետվության հիման վրա Կոմիտենտը կատարում է վերջնահաշվարկ՝ սույն պայմանագրի 2.1 կետում նշված ժամկետում:

4. Կողմերի պատասխանատվությունը

Սույն պայմանագրից բխող կողմերի պատասխանատվությունը որոշվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հատորակցության միջոցների աշխատանքի դադարեցումը:

մը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Պայմանագրի փոփոխման և լուծարման կարգը

6.1. Կոմիսիոները կարող է վաղաժամկետ դադարեցնել պայմանագիրը, եթե Կոմիտենտի հանձնարարությունը կատարելն անհնար է, կամ Կոմիտենտը խախտել է պայմանագրի պայմանը: Հրաժարվելու մասին դիմումը պետք է ներկայացվի գրավոր:

6.2. Կոմիտենտն իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնել պայմանագիրը՝ Կոմիսիոներին վարձատրելով պայմանագրի գործողության ժամկետում կատարված գործարքների համար և հատուցելով նրան տրված հանձնարարության հետևանքով առաջացած ծախսերը:

6.3. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում կողմերի ստորագրման պահից:

7. Այլ պայմաններ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

8. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

9. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիսիոներ

ստորագրություն

Կոմիտենտ

ստորագրություն

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կատարող», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը ստանձնում է Պատիրատուի համակարգչային սպասարկման գծով հետևյալ ծառայությունների մատուցումը՝

_____:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը՝

2.1.1. Սույն պայմանագրի 1- ին կետում նախատեսված ծառայությունները մատուցում է _____
հասցեում.

2.1.2. ինքնուրույն է որոշում ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատանքների և մասնագետների քանակը.

2.1.3. ինքնուրույն է իրականացնում մասնագետների աշխատատեղերի սարքավորումը.

2.1.4. կատարում է իր համակարգչային սարքավորման տեղափոխումը և տեղակայումը Պատվիրատուի մոտ.

2.1.5. ինքնուրույն ապահովում է համակարգչային սարքավորումն անհրաժեշտ ծախսանյութերով և իրականացնում է դրա նորոգումն ու տեխնիկական սպասարկումը.

2.1.6. Պատվիրատուի հայտերի կատարմանը ձեռնամուխ է լինում անհապաղ.

2.1.7. կախված հայտերի բարդությունից՝ որոշում է դրա կատարման ժամկետները դրանց մասին նախօրոք հայտնելով Պատվիրատուին և համապատասխան համաձայնագիր ստորագրելով նախօրոք նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար նախօրոք պայմանավորված գումարի _____ (_____) տոկոսի չափով.

2.1.8. Պատվիրատուի ունեցած փաստաթղթերի հիման վրա ինքնուրույն կազմում է տվյալների բանկ, փաստաթղթերի քարտացուցակներ և իրականացնում դրանց սպասարկումը.

2.1.9. անհրաժեշտության դեպքում իրավունք ունի սույն պայմանագրի պայմանների կատարման համար ներգրավել երրորդ անձանց.

2.1.10. սույն պայմանագրի գործողության ժամկետները լրանալուց հետո՝

ա) Պատվիրատուին է հանձնում էլեկտրոնային կրիչների վրա եղած բոլոր փաստաթղթերը՝ ներառյալ քարտացուցակները, տիպային փաստաթղթերի, ձևաթղթերի, աղյուսակների տպագրված օրինակները: Հանձնումը կատարվում է համապատասխան ակտով՝ պայմանագրի 3- րդ կետում նախատեսված կարգով.

բ) պարտավորվում է Պատվիրատուի կարգադրությամբ _____ օրվա ընթացքում ապամոնտաժել և դուրս հանել համակարգչային սարքավորումը.

2.1.11. Պատվիրատուին ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված կարգով և ժամկետներում.

2.2. Պատվիրատուն՝

2.2.1. Կատարողի ծառայությունների համար վճարում է սույն պայմանագրի 4-րդ կետում նախատեսված չափով և ժամկետներում.

2.2.3. Կատարողին ապահովում է պայմանագրի կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերով և տեղեկատվությամբ.

2.2.4. Կատարողին ներկայացնում է համակարգչային տարաբնույթ ծառայություններ մատուցելու հայտեր՝ այդ թվում քանավոր.

2.2.5. ապահովում է Կատարողի մասնագետների ազատ աշխատանքը.

2.2.6. ապահովում է համակարգչային սարքավորման պահպանման և անխափան աշխատանքի համար անհրաժեշտ՝ Կատարողի կողմից սահմանված բոլոր պայմանները.

2.2.7. պարտավոր է Կատարողի կողմից հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու պահից _____ (_____) օրվա ընթացքում ստորագրել այն կամ Կատարողին գրավոր տեղեկացնել իր պատճառաբանված առարկությունների մասին:

2.3. Կատարողի համակարգչային սարքավորման ինքնուրույն օգտագործումը Պատվիրատուի կողմից չի թույլատրվում:

3. Մատուցված ծառայությունների հանձնման և ընդունման կարգը

3.1. Յուրաքանչյուր ամսվա _____-ից ոչ ուշ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում այդ ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման ակտը:

3.2. Ակտում նշվում են մատուցված ծառայությունների անվանումը, արժեքը և որակը:

3.3. Ակտում կարող է ներառվել նաև այլ տեղեկություն, որի մասին կողմերը անհրաժեշտ կհամարեն նշել:

4. Ծառայությունների վճարման չափը և կարգը

4.1. Սույն պայմանագրի 1- ին կետին համապատասխան՝ Կատարողի մատուցած ծառայությունների համար Պատվիրատուն յուրաքանչյուր ամիս վճարում է _____ (_____) դրամ, կամ այլ գումար՝ փոխադարձ պայմանավորվածությամբ:

4.2. Մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկները կատարվում են հանձնման- ընդունման ակտի ստորագրման պահից ոչ ուշ, քան _____ (_____) օրվա ընթացքում:

4.3. 4.1 կետում նշված գումարը ներառում է Կատարողի՝ սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման հետ կապված բոլոր ծախսերը:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Կատարողը ձեռնամուխ է լինում իր պարտավորությունների կատարմանը սույն պայմանագրի ստորագրման պահից _____ օրվա ընթացքում:

5.2. Սույն պայմանագիրը կնքված է « _____ » ք. մինչև « _____ » ք. ընկած ժամանակահատվածի համար և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5.3. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծարվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին _____ առաջ նախագուշակագրելով:
ժամկետը

6. Այլ պայմաններ

6.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի համաձայնությամբ:

6.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունների չկատարման համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

3.3.2. եթե Մատակարարը Գնորդին հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվելու հանձնված ապրանքից կամ դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը.

3.3.3. եթե սույն պայմանագրին համապատասխան տեսականու ապրանքների հետ հանձնվել է տեսականու մասին պայմանի խախտմամբ ապրանք՝

ա) ընդունել տեսականու վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքները և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից.

գ) պահանջել տեսականու վերաբերող պայմանին չհամապատասխանող ապրանքը փոխարինել սույն պայմանագրով նախատեսված տեսականու համապատասխանող ապրանքով.

դ) ընդունել հանձնված բոլոր ապրանքները.

3.3.4. եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք, պահանջել՝

ա) համաչափ պակասեցնել ապրանքի գինը.

բ) ողջամիտ (կամ երկկողմանի համաձայնեցված) ժամկետում անհատույց վերացնել ապրանքի թերությունները.

գ) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

3.3.5. ապրանքի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերություններ)

ներ) իր ընտրությամբ՝

ա) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը.

բ) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով.

3.3.6. անկոմպլեկտ ապրանք հանձնելու դեպքում պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը.

բ) ողջամիտ (կամ երկկողմանի համաձայնեցված) ժամկետում կոմպլեկտավորելու ապրանքը.

3.3.7. եթե Վաճառողը ողջամիտ ժամկետում չի կատարել ապրանքը կոմպլեկտավորելու պահանջները՝

ա) պահանջել փոխարինելու անկոմպլեկտ ապրանքը կոմպլեկտավորված ապրանքով.

բ) հրաժարվել սույն պայմանագրից և պահանջել վերադարձնելու վճարված գումարը.

3.3.8. ծանուցելով Մատակարարին՝ հրաժարվել ժամկետանց մատակարարված ապրանքներն ընդունելուց:

3.4. Գնորդը պարտավոր է՝

3.4.1. կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները.

3.4.2. սույն պայմանագրով սահմանված ժամկետում զննել ապրանքները, ստուգել դրանց քանակը և որակն ու հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին.

3.4.3. մատակարարված ապրանքները տրանսպորտային կազմակերպությունից ստանալու դեպքում ստուգել ապրանքների համապատասխանությունը տրանսպորտային և ուղեկցող փաստաթղթերում նշված տեղեկություններին.

3.4.4. Մատակարարի հանձնած ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում ապահովել այդ ապրանքի պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

4. Ապրանքի գինը և հաշվարկման կարգը

4.1. Ապրանքի գինը կազմում է _____ դրամ:

4.2. Գնի ցանկացած փոփոխություն թույլատրվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.3. Սույն պայմանագրի 4.1 կետում նշված գինը ներառում է (չի ներառում) ավելացված արժեքի հարկը, ապրանքը Գնորդին հասցնելու համար կատարված տրանսպորտային ծախսերը, ինչպես նաև սույն պայմանագրի պայմանները կատարելու հետ կապված՝ Մատակարարի ծախսերը: Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է _____, ապրանքն ստանալուց հետո _____ օրվա ընթացքում:

5. Ապրանքի հանձնում-ընդունումը

5.1. Ապրանքն ընդունելու ժամանակ Գնորդն ստուգում է դրա համապատասխանությունը տրանսպորտային և ապրանքն ուղեկցող այլ փաստաթղթերում նշված տվյալներին (ներառյալ՝ սույն պայմանագիրը և պատվերը)՝ ըստ անվանացանկի, քանակի, որակի և տեսականու:

5.2. Ապրանքի հանձնում-ընդունումը վերացնելուց հետո Գնորդը կազմում է ակտ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Անպատշաճ որակի ապրանք ստանալու դեպքում Գնորդն իրավունք ունի Մատակարարից պահանջել՝

ա) համաչափ նվազեցնելու ապրանքի գինը.

բ) ողջամիտ (կամ երկկողմանի համաձայնեցված) ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները,

գ) հատուցել ապրանքի թերությունները վերացնելու կապակցությամբ Գնորդի կատարած ծախսերը:

6.2. Եթե Մատակարարը չի մատակարարել սույն պայմանագրով նախատեսված քանակի ապրանք, կամ չի կատարել անորակ ապրանքը սահմանված ժամկետում պատշաճ որակի ապրանքով փոխարինելու Գնորդի պահանջը, ապա Գնորդն իրավունք ունի չմատակարարված ապրանքները ձեռք բերել այլ անձանցից՝ ձեռքբերման հետ կապված բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը վերագրելով Մատակարարին:

6.3. Գնորդն իրավունք ունի հրաժարվել վճարելու անպատշաճ որակի ապրանքի համար, իսկ եթե արդեն վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարները:

6.4. Մատակարարը, մատակարարման ժամկետները խախտելու դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար Գնորդին վճարում է տույժ՝ ապրանքի արժեքի _____ տոկոսի չափով:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄՄԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է _____ դատարանի քննությանը:

9. Այլ պայմաններ

9.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև _____:

9.2. Սույն պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են գրավոր, որոնք նույնպես ստորագրում են կողմերը:

9.3. Սույն պայմանագիրը լուծարելու և դադարելու հիմքերը որոշվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, _____ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Մատակարարող

ստորագրություն

Գնորդ

ստորագրություն

**ՄԱՐԿԵՏԻՆԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և ոչ կոմերցիոն _____,
կազմակերպ. անվանումը կամ ֆիզ. անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կատարող», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

ման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ վերջինիս մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

1.2. Կատարողը պարտավորվում է իրականացնել հավելված 1-ում նշված ապրանքների գնորդների շուկայի մարկետինգային հետազոտություն (այսուհետ՝ Ծառայություններ):

1.3. Մարկետինգային հետազոտության նպատակն է՝ որոշել հավելված 1-ում նշված ապրանքների սպառողական պահանջարկը _____

շրջան, մարզ, պետություն, տարածաշրջան

1.4. Աշխատանքների կատարման ժամկետն է՝ « _____ » _____ թ. մինչև « _____ » _____ թ.:

1.4.1. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման- ընդունման ակտի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Կատարողին հանձնել հավելված 1-ում նշված ապրանքների նմուշներ, գովազդային նմուշներ և տեխնիկական փաստաթղթեր՝ պայմանագիրը ստորագրելուց հետո _____ օրվա ընթացքում:

2.1.2. Ներկայացնել այդ ապրանքների մասին ցանկացած տեղեկություն՝ Կատարողի կողմից գրավոր պահանջի դեպքում:

2.2. Կատարողը պարտավոր է՝

2.2.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.2.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում կամ ժամկետից շատ՝ Պատվիրատուի համաձայնությամբ.

2.2.3. Պատվիրատուի պահանջով _____ օրվա ընթացքում ներկայացնել կատարված մարկետինգային հետազոտության վերաբերյալ տեղեկություն:

2.3. Պատվիրատուն պարտավոր է վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան, Ծառայությունների հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից _____ (_____) օրվա ընթացքում.

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.4.2. մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է, մինչև պայմանագրի կատարումից հրաժարման մասին տեղեկություն ստանալը, մատուցված Ծառայությունների չափին:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է՝ _____ (_____) դրամ:

3.2. Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գնի _____ տոկոսը վճարվում է որպես կանխավճար, իսկ մնացած մասը վճարվում է սույն պայմանագրի կատարումից և հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո՝ 5 օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի 1.4 կետում նշված Ծառայությունների մատուցման կամ 3.2 կետում նշված վճարման ժամկետների խախտման համար խախտող կողմը մյուս կողմին վճարում է տուգանք՝ պայմանագրի արժեքի _____ տոկոսի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար _____ տոկոսի չափով:

4.2. Տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները նրա անբաժանելի մասն են:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

ստորագրություն

Կատարող

ստորագրություն

ՄՇՏԱԿԱՆ ՌԵՆՏԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

, որը բնակվում է _____

ազգանունը, անունը
հասցեում, անձնագրի սերիան _____ թիվ _____, տրված _____
կողմից « _____ » _____ թ., այսուհետ՝ «Ռենտա ստացող», մի կողմից, և _____,

որը բնակվում է _____ հասցեում, անձնագրի սերիա _____ թիվ _____,
տրված _____ կողմից « _____ » _____ թ., այսուհետ՝ «Ռենտա վճարող», մյուս
կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Ռենտա ստացողը Ռենտա վճարողին սեփականության իրավունքով հանձնում է

գույք, այսուհետ՝ «Գույք», իսկ Ռենտա վճարողը պարտավորվում է այդ գույքի դիմաց Ռենտա ստացողին պար-
բերաբար վճարել ռենտա՝ որոշակի գումար:

1.2. Ռենտա վճարողը պարտավոր է ռենտան վճարել անժամկետ:

1.3. Սույն պայմանագրի գույքը Ռենտա ստացողին է պատկանում սեփականության իրավունքով, ինչը հաս-
տատվում է _____:

1.4. Գույքը Ռենտա ստացողին է հանձնվում սույն պայմանագիրը նոտարական կարգով վավերացնելու հաջորդ
փաստաթղթի անվանումը
օրը:

1.5. Սույն պայմանագրից բխող սեփականության իրավունքը Ռենտա վճարողի մոտ ծագում է Գույքը նրան
հանձնելու պահից (անշարժ գույքի դեպքում՝ այդ իրավունքի պետական գրանցման պահից):

2. Գինը

2.1. Համաձայն _____,

փաստաթղթի անվանումը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրվել

Գույքի գինը կազմում է _____ (_____) դրամ:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Ռենտա վճարողը պարտավոր է ռենտան վճարել յուրաքանչյուր եռամսյակի վերջին աշխատանքային օրը՝
_____ դրամ:

Վճարվող ռենտայի չափն ավելացվում է սահմանված նվազագույն աշխատավարձի չափի ավելացմանը համա-
պատասխան:

3.2. Ռենտա վճարողը պարտավոր է հօգուտ Ռենտա ստացողի ապահովագրել վերջինիս հանդեպ իր պարտա-
վորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու պատասխանատվության ռիսկը:

4. Ռենտա վճարողի պատասխանատվությունը

4.1. Վճարի յուրաքանչյուր օրվա կետանցի համար Ռենտա վճարողը Ռենտա ստացողին վճարում է տույժ՝
վճարման ենթակա գումարի _____ տոկոսի չափով:

4.2. Գույքն այլ անձի սեփականությանը հանձնած Ռենտա վճարողն այդ անձի հետ սուբսիդիար պատասխա-
նատվություն է կրում Ռենտա ստացողի պահանջներով, որոնք ծագել են սույն պայմանագրի պայմանների խախ-
տման հետևանքով:

4.3. Գույքի պատահական կորստի կամ վնասվածքի դեպքում Ռենտա վճարողն իրավունք ունի պահանջել դա-
դարեցնելու սույն պայմանագրով նախատեսված պայմաններով ռենտա վճարելու պարտավորությունը կամ փո-
փոխելու այն վճարելու պայմանները:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ- ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրից բխող պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար
կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք,
որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության
հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադա-
րեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրից բխող պար-
տավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավե-
լի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պա-
հելով մյուս կողմին:

6. Պայմանագրի լուծարումը Ռենտա ստացողի պահանջով

6.1. Ռենտա վճարողի կողմից սույն պայմանագրի էական խախտման դեպքում Ռենտա ստացողն իրավունք ու-
նի Ռենտա վճարողից պահանջել հետ գնելու ռենտան:

6.2. Ռենտա ստացողն իրավունք ունի Ռենտա վճարողից պահանջել հետ գնելու ռենտան, եթե՝

6.2.1. Ռենտա վճարողն ավելի քան մեկ տարի կետանցել է ռենտայի վճարը.

6.2.2. առաջացել են հանգամանքներ, որոնք ակնհայտ վկայում են, որ ռենտան չի կարող վճարվել պայմանա-
գրով սահմանված չափով և ժամկետներում.

6.2.3. ռենտայի վճարի դիմաց հանձնված անշարժ գույքն անցել է ընդհանուր սեփականության կամ բաժանվել
է մի քանի անձանց միջև :

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Մինչև սույն պայմանագիրը կնքելը Ռ-ենտա ստացողը Գ-ույթը ոչ ոքի չի վաճառել, գրավ չի դրել, այն վեճի առարկա չէ և արգելադրված չի եղել:

7.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակում:

8. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Ռ-ենտա ստացող

ստորագրություն

Ռ-ենտա վճարող

ստորագրություն

Նոտարական գրասենյակի մակագրությունը՝ _____

ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

« _____ » _____ թ.
վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կողմ-1», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կողմ-2», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Կողմերը պարտավորվում են հետագայում կնքել պայմանագիր _____ մասին:

2. Պայմանագիրը, որը Կողմերը պարտավորվում են կնքել, պետք է պարունակի հետևյալ պայմանները.

ա) _____

բ) _____

գ) _____

դ) _____

3. Պայմանագրի նախագիծը կազմում է Կողմ-1-ը, իսկ Կողմ-2-ը մշակում է հետևյալ փաստաթղթերը.

ա) _____

բ) _____

գ) _____

դ) _____

4. Կողմ-1-ը պարտավորվում է պայմանագրի նախապատրաստված նախագիծը ուղարկել Կողմ-2-ին մինչև
« _____ » _____ թ.:

5. Կողմ-2-ը պարտավոր է Կողմ-1-ին ուղարկել.

ա) պայմանագրի նախագիծին հավանություն տալու վերաբերյալ տեղեկագիր, կամ՝

բ) պայմանագրի նախագիծին հավանություն չտալու դեպքում՝ տարածայնության արձանագրություն:

Երկու դեպքում էլ՝ պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հաշված _____ օրվա ընթացքում:

6. Կողմ-1-ը, պայմանագրի նախագծի վերաբերյալ տարածայնության արձանագրություն ստանալով, պարտավոր է՝ ստացման օրվանից հաշված _____ օրվա ընթացքում Կողմ-2-ին տեղեկացնել տարածայնության արձանագրության վերաբերյալ՝ իր կողմից հավանության կամ մերժման մասին:

7. Կողմ-1-ի կողմից տարածայնության արձանագրությունը մերժվելու դեպքում՝ Կողմերը հանդիպում են և կազմում տարածայնության վերաբերյալ համաձայնության արձանագրություն:

8. Կողմերը պարտավորվում են կնքել պայմանագիր՝ մինչև « _____ » _____ թ.:

9. Եթե Կողմերից մեկը կփորձի շեղվել (մերժել) պայմանագիրը կնքելուց, ապա մյուս Կողմը իրավունք ունի դիմել դատարանի միջնորդությանը՝ պայմանագիրը կնքելուն հարկադրելու վերաբերյալ պահանջով:

10. Պայմանագրի կնքումից առանց հիմնավորման շեղվող (մերժող) Կողմը պարտավոր է մյուս Կողմին փոխհատուցել՝ հասցված բոլոր վնասների համար:

11. Կողմերից մեկի կողմից պարտավորությունների խախտման դեպքում, որոնք նշված են սույն պայմանագրի 4, 5 և 6 կետերում, մյուս Կողմին վճարում է տուժավճար _____ դրամ՝ ժամկետանցի յուրաքանչյուր օրվա դիմաց:

12. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ -1

ստորագրություն

Կողմ- 2

ստորագրություն

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

, որը բնակվում է _____

ազգանունը, անունը
հասցեում, անձնագրի սերիան _____ թիվ _____, տրված _____
կողմից « _____ » _____ թ., այսուհետ՝ «Նվիրատու», մի կողմից, և _____,

որը բնակվում է _____ հասցեում, անձնագրի սերիա _____ թիվ _____,
տրված _____ կողմից « _____ » _____ թ., այսուհետ՝ «Նվիրառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նվիրատուն պարտավորվում է նվիրառուի սեփականությանն անհատույց հանձնել թիվ 1 հավելվածում նշված գույքը:

1.2. Թիվ 1 հավելվածը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Նվիրատուն պարտավոր է՝

2.1.1. սույն պայմանագիրն ստորագրելու պահից _____ օրվա ընթացքում Նվիրառուին հանձնել թիվ 1 հավելվածում նշված գույքը: Գույքը հանձնվում է _____:

2.1.2. հատուցել նվիրված գույքի թերությունների հետևանքով Նվիրառուին պատճառված վնասը, եթե ապացուցվում է, որ այդ թերություններն առաջացել են մինչև գույքը Նվիրառուին հանձնելը, և Նվիրատուն, դրանց մասին իմանալով, չի նախագուշացրել Նվիրառուին:

2.2. Նվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. հրաժարվել Նվիրառուին գույք փոխանցելու խոստումը կատարելուց, եթե պայմանագիրը կնքելուց հետո Նվիրատուի գույքային կամ այլ դրությունը այնքան է վատթարացել, որ նոր պայմաններում պայմանագրի կատարումը կառաջացնի նրա կենսամակարդակի էական իջեցում:

2.2.2. վերացնել նվիրատվությունը, եթե Նվիրառուն ոտնձգություն է կատարել Նվիրատուի, նրա ընտանիքի անդամներից կամ մերձավոր ազգականներից որևէ մեկի կյանքի դեմ, այդ դեպքում, եթե Նվիրատուն մահացել է, դատարանում նվիրատվությունը վերացնելու պահանջի իրավունք ունեն Նվիրատուի ժառանգները:

2.3. Նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն փոխանցելը գրավոր հրաժարվել դրանից: Նվիրառուի հրաժարականի առկայության դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծարված:

2.4. Նվիրառուն պարտավոր է նվիրատվության վերացման դեպքում վերադարձնել Նվիրատուի նվիրած գույքը, եթե այն բնեղենով պահպանվել է նվիրատվության վերացման պահին:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տև յակ պահելով մյուս կողմին:

4. Այլ պայմաններ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

4.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.3. Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ կողմերի ստորագրմամբ:

5. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Նվիրատու

ստորագրություն

Նվիրառու

ստորագրություն

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կապալառու պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել _____,

աշխատանքի նկարագրությունը

իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վճարել դրա համար:

2. Աշխատանքները կատարելը

2.1. Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով _____:
ում նյութերով և միջոցներով

3. Աշխատանքի գինը և վարձատրությունը

3.1. Աշխատանքի գինը որոշվում է կողմերի համաձայնությամբ հաստատված նախահաշվով և կազմում է _____ (_____) դրամ, որից _____ (_____) դրամը Պատվիրատուն վճարում է Կապալառուին որպես կանխավճար, որը հաշվարկվում է աշխատանքի ընդհանուր գնի մեջ:

3.2. Աշխատանքի գինը կայուն է, այն կարող է փոխվել միայն փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

3.3. Եթե Կապալառուի փաստացի ծախսերը պակաս են այն գումարից, որը հաշվի է առնվել աշխատանքի գինը որոշելիս, Կապալառուին պահպանում է նախկին պայմաններով նախատեսված վարձատրություն ստանալու իրավունքը, եթե Պատվիրատուն չի ապացուցում, որ Կապալառուի կատարած խնայողությունն ազդել է աշխատանքի որակի վրա:

3.4. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի 3.1 կետում սահմանված գինը Կապալառուին վճարել աշխատանքի արդյունքներն ընդունելուց հետո, եթե աշխատանքը կատարված է պատշաճ որակով, սույն պայմանագրով սահմանված ժամկետում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

3.5. Սույն պայմանագրի կատարման կապակցությամբ Կապալառուին հասանելի է 3.1 կետում սահմանված գինը վճարելու պարտականությունը Պատվիրատուի կողմից չկատարելու դեպքում Կապալառուին իրավունք ունի պահել աշխատանքի արդյունքը մինչև Պատվիրատուն կվճարի համապատասխան գումարը:

4. Կողմերի իրավունքները և պարտականությունները

4.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

4.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

4.1.2. հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուին ժամանակին չի սկսում սույն պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա՝ ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

4.1.3. եթե աշխատանքի կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի կատարվելու, ողջամիտ ժամկետ նշանակել Կապալառուի թույլ տված թերությունները վերացնելու համար, և եթե այդ ժամկետում Կապալառուին չի վերացնում թերությունները, հրաժարվել Կապալի պայմանագրից և Կապալառուի հաշվին թերությունների վերացնելու հանձնարարել այլ անձանց, ինչպես նաև պահանջել հատուցելու վնասները:

4.1.5. աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 722 հոդվածով սահմանված երաշխիքային ժամկետում:

4.1.6. առանց կատարված աշխատանքը վարձատրելու և վնասները հատուցելու լուծարելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է այնպիսի աշխատանքի կատարման պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները:

4.1.7. աշխատանքի արդյունքն ընդունելու կամ այն օգտագործելու ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 723 հոդվածով սահմանված ժամկետում, իր ընտրությամբ, Կապալառուից պահանջել՝

ա) ողջամիտ (կամ երկկողմանի համաձայնեցված) ժամկետում անհատույց վերացնել թերությունները:

բ) համաչափորեն նվազեցնել աշխատանքի համար սահմանված գինը:

գ) հատուցել թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը:

4.1.8. աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 10 (տաս) տարվա ընթացքում Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնել այդ թերությունները կամ վերադարձնել աշխատանքի համար վճարված գնի մի մասը կամ հատուցել իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը:

4.2. Պատվիրատուն պարտավոր է՝

4.2.1. աշխատանքները կատարելիս աջակցել Կապալառուին՝ սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

4.2.2. Կապալառուին հանձնել սահմանված կարգով հաստատված նախագծային-նախահաշվային փաստաթղթերը, ապահովել շինարարության ֆինանսավորման բացումը և անընդհատությունը:

4.2.3. սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կապալառուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ վաշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել

Կապալառուին.

4.2.4. աշխատանքն ընդունելուց հետո, աշխատանքի արդյունքում պայմանագրից այնպիսի շեղումներ կամ թերություններ հայտնաբերելու դեպքում, որոնք չէին կարող հայտնաբերվել ընդունման սովորական եղանակի ժամանակ (թաքնված թերություններ), ողջամիտ (4.1.8. կետում նշված) ժամկետում, այդ մասին հայտնել Կապալառուին:

4.3. Կապալառուին իրավունք ունի՝

4.3.1. կատարված աշխատանքի արդյունքն ստանալու համար Պատվիրատուի չներկայանալու կամ այն ընդունելուց խուսափելու դեպքերում նրան գրավոր զգուշացնել և զգուշացման օրվանից երկու ամիս անց վաճառել աշխատանքի արդյունքը, իսկ ստացված գումարը, իրեն հասանելիք վճարները պահելուց հետո, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 266 հոդվածով սահմանված կարգով մուծել նոտարի կամ դատարանի դեսպոզիտ:

4.4. Կապալառուին պարտավոր է՝

4.4.1. մինչև սույն պայմանագիրը կնքելը, Պատվիրատուին անհրաժեշտ և հավաստի տեղեկատվություն տրամադրել առաջարկվող աշխատանքի, դրա տեսակների և առանձնահատկությունների, գնի և վճարման ձևի մասին, ինչպես նաև Պատվիրատուի ցանկությամբ նրան հաղորդել աշխատանքին վերաբերող այլ տեղեկություններ:

4.4.2. հաստատված և Պատվիրատուի հետ համաձայնեցված նախագծային-նախահաշվային փաստաթղթերի և շինմոնտաժային աշխատանքների գրաֆիկին համաձայն, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով և պատշաճ որակով իրականացնել շինարարությունը _____ ընկած ժամանակահատվածում:

ժամկետը

4.4.3. ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

4.4.4. աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

5. Պայմանագրի վաղաժամկետ լուծարումը

5.1. Եթե Պատվիրատուին, չնայած Կապալառուի ժամանակին ու հիմնավոր նախագուշացմանը, ողջամիտ ժամկետում չի փոխարինում ոչ պիտանի և անորակ նյութերը կամ սարքավորումը, չի փոխում շինարարության կատարման մասին ցուցումները կամ չի վերացնում օբյեկտի պիտանիությանն ու ամրությանը սպառնացող այլ հանգամանքները, ապա Կապալառուին իրավունք ունի լուծարել պայմանագիրը և պահանջել հատուցելու պատճառված վնասները:

5.2. Պատվիրատուին նույնպես իրավունք ունի լուծարել պայմանագիրը, եթե նա հայտնաբերել է էական թերություններ կամ նախագծից ու սույն պայմանագրի պայմաններից կատարված էական շեղումներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

Սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Վեճերի լուծման կարգը

Պատվիրատուի և կապալառուի միջև աշխատանքի թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած կողմի պահանջով նշանակվում է փորձաքննություն: Փորձաքննության ծախսերը կրում է փորձաքննություն պահանջած կողմը, իսկ եթե փորձաքննությունը նշանակվել է երկու կողմերի համաձայնությամբ, ապա ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

9. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրվելուց հետո և գործում է մինչև « _____ » _____ թ.

10. Այլ պայմաններ

10.1. Սույն պայմանագիրը կատարելիս կողմերը ղեկավարվում են կապիտալ շինարարության կապալի պայմանագրի մասին կանոններով, գործող օրենսդրությամբ, կապիտալ շինարարության նորմատիվ ակտերով և սույն պայմանագրի հատուկ պայմաններով:

10.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

11. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

ստորագրություն

Կապալառու

ստորագրություն

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱՆՔԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրա-
պետմանը և օգտագործմանը հանձնել ոչ բնակելի տարածք, այսուհետ՝ «Օբյեկտ», որը գտնվում է _____
հասցեում,

նպատակով օգտագործելու համար: Վարձակալության
հանձնվող տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է _____ (_____) քառակուսի մետր:

1.2. Սույն պայմանագիրը գործում է « _____ » _____ թ. մինչև « _____ » _____ թ.:

1.3. Վարձատուն վարձակալության հանձնվող Օբյեկտի սեփականատերն է, ինչը հաստատվում է _____:

փաստաթղթի անվանումը

1.4. Վարձատուն երաշխավորում է, որ Օբյեկտը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհա-
տույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

1.5. Վարձակալության հանձնված Օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի
հիմք չէ սույն պայմանագիրը լուծարելու կամ փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. պահանջել Վարձակալից օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և նշանակությանը
համապատասխան.

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել մու-
ծելու վարձավճարը.

2.1.3. եթե Վարձակալը Օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ նշանակությանն անհամապա-
տասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Օբյեկտը Վարձակալին հանձնել հանձնման-ընդունման ակտով՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու
պահից _____ օրից ոչ ուշ: Հանձնման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

Նշված ակտը պայմանագրի անբաժանելի մասն է.

2.2.2. Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապա-
տասխան վիճակում.

2.2.3. Օբյեկտը Վարձակալին հանձնել դրան վերաբերող փաստաթղթերով.

2.2.4. իր հաշվին կատարել վարձակալության հանձնված Օբյեկտի հիմնական վերանորոգումը.

2.2.5. Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բո-
լոր իրավունքների մասին.

2.2.6. Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Օբյեկտի թերությունները կամ համաչափ իջեցնել
վարձավճարը.

2.2.7. մեկամսյա ժամկետում քննարկել Օբյեկտի նշանակության փոփոխման, ինչպես նաև դրա վերանորոգ-
ման և վերասարքավորման հարցերի հետ կապված Վարձակալի դիմումները.

2.2.8. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկանքով Օբյեկտն ազատելու անհրաժեշտու-
թյան մասին՝ կապված շենքը հիմնական վերանորոգման կանգնեցնելու կամ քաղաքաշինական նկատառումներով
այն քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ.

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել Վարձատուից՝ սույն պայմանագրի 2.2.1 կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել
Օբյեկտը.

2.3.2. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը.

2.3.3. Օբյեկտի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս,
իր ընտրությամբ՝

2.3.3.1. Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Օբյեկտի թերությունները կամ համաչափ իջեցնելու
վարձավճարը կամ հատուցելու Օբյեկտի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.3.2. Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու
համար իր կատարած ծախսերի գումարը.

2.3.3.3. պահանջել վաղաժամկետ լուծարելու պայմանագիրը.

2.3.4. պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների բերումով, որոնց համար ինքը պա-
տասխանատվություն չի կրում, Օբյեկտի վիճակը վատթարացել է.

2.3.5. Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու սույն պայմանագրի 2.2.3 կետում նշված
պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.5.1. կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմ-
նական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի
հաշվին.

2.3.5.2. պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.

2.3.5.3. պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.3.6. Վարձատուի կողմից սույն պայմանագրի 2.2.4 կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում, պահանջել նվազեցնելու վարձավճարը.

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան.

2.4.2. ժամանակին մուծել Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված վճարը.

2.4.3. ժամանակին կատարել վարձակալված Օբյեկտի ընթացիկ վերանորոգումը.

2.4.4. ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը.

2.4.5. առանց Վարձատուի գրավոր համաձայնության՝ Օբյեկտում չկատարել փակ և բաց լրացումներ և չանցկացնել հաղորդակցության ուղիներ, չանել վերանախագծումներ և վերասարքավորումներ:

Վարձակալի կողմից Օբյեկտի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի կամ ծածկերի ամբողջականության խախտում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում պահանջել, որպեսզի դրանք վերացվեն, իսկ տարածքը բերվի իր նախկին տեսքին.

2.4.6. վարձակալված Օբյեկտում պահպանել սանիտարական և հակահրդեհային նորմերը, ինչպես նաև բոլոր այն կանոնները և նորմերը, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի ու վարձակալված Օբյեկտի նկատմամբ.

2.4.7. Վարձատուի որոշած ժամկետներում ազատել տարածքները՝ կապված Օբյեկտի (կամ դրա մասի) կառուցվածքների վթարային վիճակի, Օբյեկտը հիմնական վերանորոգման ենթարկելու կամ քաղաքաշինության նկատառումներով այն քանդելու հետ.

2.4.8. Վարձատուին անիջապես տեղեկացնել Օբյեկտի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Օբյեկտին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև Օբյեկտը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ.

2.4.9. առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել գրավի, ենթավարձակալության պայմանագրեր և չմտնել գործարքների մեջ՝ կապված օբյեկտի հետ: Առանց համաձայնության նման պայմանագրեր կնքելը կամ նման գործարքներ կատարելը հիմք են պայմանագրի միակողմանիորեն լուծարման համար.

2.4.10. ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Օբյեկտի սպասվելիք ազատման մասին՝ կապված պայմանագրի ժամկետն ավարտվելու, կամ այն վաղաժամկետ դադարեցնելու հետ.

2.4.11. Օբյեկտն ազատելիս, այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.

2.4.12. սահմանված ժամկետում կատարել Վարձատուի կարգադրությունները՝ ուղղված իր գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգի տակ են դնում Օբյեկտը:

3. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները

3.1. Օբյեկտի ամսեկան վարձավճարը սահմանվում է _____ (_____) դրամ:

3.2. Վարձակալը Վարձատուին վճարում է վարձավճարը՝ առանձին տողով նշելով ավելացված արժեքի հարկը: Վարձավճարը վճարում է յուրաքանչյուր հաջորդող ամսվա 10-ից ոչ ուշ:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վարձակալը պայմանագրի 3.1 կետում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տուգանք՝ վերոհիշյալ գումարի _____ տոկոսի չափով:

4.2. Պայմանագրի այլ պայմաններ խախտելու դեպքում մեղավոր կողմը վճարում է տույժ՝ 3.1 կետում նշված գումարի _____ տոկոսի չափով:

4.3. Տուգանքի (տույժի) մուծումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունների կատարումից:

4.4. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե այն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

5. Վարձակալված օբյեկտի բարելավումները

5.1. Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին կատարել է վարձակալված Օբյեկտից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալը Վարձատուի համաձայնությամբ իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

5.2. Վարձակալված Օբյեկտի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականությունը:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծարումը

6.1. Վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծարվել, եթե Վարձակալը՝

6.1.1. Օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ նշանակության խախտումներով.

6.1.2. էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը.

6.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.

6.1.4. սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Օբյեկտի ընթացիկ վերանորոգումը:

6.2. Վարձակալի պահանջով՝ սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծարվել, եթե՝

6.2.1. Վարձատուն խոչընդոտներ է ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

6.2.2. Վարձակալին հանձնված Օբյեկտն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին:

6.2.3. Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Օբյեկտը դարձել է

օգտագործման համար ոչ պիտանի:

7. Հատուկ պայմաններ

7.1. Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած այլ ժամկետում:

7.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում են և ձևակերպում են լրացուցիչ համաձայնագրերով:

7.3. Օբյեկտի վրա արտաքին գովազդի և տեղեկատվության օբյեկտների տեղադրումն իրականացնում է Վարձակալը կամ նրա հետ համապատասխան պայմանագիր կնքած անձը՝ առանց Վարձատուի համաձայնության:

7.4. Կողմերի վավերապայմանների փոփոխման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել այդ մասին:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Պայմանագրին կից հավելվածները

Պայմանագրի անբաժանելի մասերն են հետևյալ հավելվածները.

_____:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<i>Վարձատու</i>	<i>Վարձակալ</i>
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

ՊԱՀԵՏՏԱՎՈՐՎԱԾ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պահատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պահառու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի պայմաններին համաձայն, Պահառուն պարտավորվում է վարձատրվելու պայմանով Պահատուից ընդունել և պահպանել ապրանքներ և առաջին իսկ պահանջով այն անվնաս և ամբողջական վերադարձնել Պահատուին:

1.2. Սույն պայմանագրով պահպանվող ապրանքներն են.

ա) _____

նշել ապրանքի անվանումը և քանակը

բ) _____

գ) _____

դ) _____

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Պահատուն.

2.1.1. Պահատուն պահպանության համար Պահատուից ընդունում է ապրանքը՝ սույն պայմանագիրը ստորագրելու պահից _____ օրվա ընթացքում:

2.1.2. Պահատուն պահպանության ենթակա ապրանքն ընդունում է _____
գտնվող պահեստում:

Վերոնշյալ պահեստում Պահատուն պարտավոր է ընդունել պահպանության ենթակա ապրանքները և դրանք հանձնել հետևյալ օրերին և ժամերին _____ :

2.1.3. Պահատուն պահեստում ապահովում է պահպանության հետևյալ պայմանները՝

ջերմաստիճան _____

խոնավություն _____

2.1.4. Պահպանության հանձնված ապրանքների անվնասությունն ու ամբողջականությունը ապահովելու նպատակով Պահատուն պարտավոր է ձեռնարկել օրենքով, նորմատիվային ակտերով և սույն պայմանագրով նախատեսված բոլոր միջոցառումները, որոնք համապատասխանում են գործնական շրջանառությանն ու պահպանության պարտավորությունների էությանը, ներառյալ՝ պահպանության հանձնված ապրանքների յուրահատկությունները:

2.1.5. Պահատուի ներկայացուցչի ներկայությամբ, ապրանքների պահպանության ընդունման ժամանակ, Պահատուն իր հաշվին իրականացնում է ապրանքների զննումը և սահմանում է դրանց քանակն ու արտաքին վիճակը: Չննումն ավարտելուց հետո Պահատուն Պահատուին է հանձնում պահեստային անդորագիր, որում նշված են.

ա) ապրանքները պահպանության ընդունման պահեստի պատկանելիությունը, գտնվելու վայրը և անվանումը,

բ) պահեստի ռեեստրին համապատասխան պահեստային անդորագրի ընթացիկ համարը,

գ) այն անձի տվյալները, ումից պահպանության համար ընդունվել են ապրանքները, ինչպես նաև՝ Պահատուի գտնվելու վայրը,

դ) պահպանության ընդունված ապրանքների անվանումը, քանակը, քաշը և ապրանքային տեղը,

ե) Պահատուի կողմից սահմանված ի պահ տրված ապրանքի պահպանության ժամկետը կամ Պահատուի ցուցումը՝ որ ապրանքը տրված է պահպանության ցպահանջ,

զ) պահեստային անդորագրի տրման ամսաթիվը,

է) Պահատուի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ ի պահ տրված ապրանքների արժեքը,

ը) Պահատուի ստորագրությունը և կնիքը,

Պահեստային անդորագրի տրամադրումը նշանակում է, որ Պահատուն կատարել է ապրանքների ընդունման բոլոր գործողությունները, ներառյալ՝ ապրանքների քանակի և արտաքին վիճակի ստուգումը:

2.1.6. Պահատուի կողմից ի պահ տրված ապրանքի դուրս գրումը Պահատուն իրականացնում է պահեստային անդորագրի հիման վրա:

2.1.7. Պահատուն պարտավոր է Պահատուին վերադարձնել այն ապրանքները, որոնք տրվել են ի պահ և այն վիճակում, ինչ վիճակում դրանք ընդունվել են պահպանության համար:

2.1.8. Պահատուն ապահովում է ապրանքների համապատասխան պահպանություն (հսկողություն):

2.1.9. Պահատուն առանց Պահատուի համաձայնության իրավունք չունի օգտվել ի պահ տրված ապրանքներից, որը հավասարազոր է երրորդ անձի կողմից այդ ապրանքներից օգտվելուն:

2.1.10. Առանց Պահատուի համաձայնության Պահատուն իրավունք չունի պահպանության համար ապրանքը հանձնել երրորդ անձի, բացառությամբ այն դեպքերի, երբ նա, իրավիճակից ելնելով, ի շահ Պահատուի, հարկադրված է դա անել և հնարավորություն չի ունեցել ստանալու նրա համաձայնությունը:

Պահատուն պարտավոր է պահպանվող ապրանքը երրորդ անձին հանձնելու մասին անհապաղ տեղեկացնել Պահատուին: Դրա հետ մեկտեղ Պահատուն պատասխան է տալիս երրորդ անձի գործողությունների համար, ում ի պահ է տվել ապրանքը:

2.1.11. Պահատուն սեփական ուժերով է ապահովում բարձրան-բեռնափոխման աշխատանքները՝ ինչպես

ընդունման, այնպես էլ վերադարձման ժամանակ:

2.1.12. Պահառուն պարտավոր է Պահատուին ընձեռել պահպանվող ապրանքները ստուգելու, դիտարկելու, չափելու, կշռելու, վերահաշվելու, ինչպես նաև ապրանքների ամբողջականությունն ու անվնասությունն ապահովող միջոցառումներ ձեռնարկելու հնարավորություններ:

2.2. Պահատուն.

2.2.1. Իրականացնում է ի պահ տրվող ապրանքների հանձնումը առանձին խմբաքանակներով՝ սույն պայմանագրի ստորագրման պահից _____ օրվա ընթացքում:

2.2.2. Սույն պայմանագրի 3-րդ մասով սահմանված կարգով վճարում է Պահառուի ծառայությունների դիմաց:

2.2.3. Ցանկացած ժամանակ իրավունք ունի Պահառուի պահեստից մասամբ կամ ամբողջովին վերցնել իր կողմից ի պահ տրված ապրանքը:

3. Պահպանության համար վարձատրումը

3.1. Պահատուն Պահառուին վճարում է ամսեկան վարձատրություն _____ դրամի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

3.1.1. Պահատուի կողմից 3.1. կետում նշված գումարը վճարվում է ամեն ամիս, ոչ ուշ, քան հաջորդ ամսվա _____-ը:

3.1.2. Վարձատրության գումարը իր մեջ ներառում է Պահառուի բոլոր այն ծախսերը, որոնք կապված են սույն պայմանագրով իր պարտավորությունները կատարելու հետ:

3.2. Եթե մինչև պայմանագրի գործողության ավարտը Պահատուն ի պահ տրված ապրանքը ետ չի վերցրել, ապա նա Պահառուին պարտավոր է վճարել սույն պայմանագրի 3.1. կետով սահմանված համարժեք վարձատրություն՝ ապրանքների հետագա պահպանության համար:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերից մեկի կողմից դադարեցման հայտարարումը:

4.2. Պայմանագրի դադարեցման մասին հայտարարությունը պետք է լինի գրավոր ձևով, ոչ ուշ, քան 90 օր առաջ՝ պայմանագրի դադարեցման ենթադրյալ ժամկետից:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պահառուն պատասխան է տալիս ի պահ ընդունած ապրանքի կորստի, տեղ չհասցնելու, ոչնչացման կամ վնասվելու համար, եթե չի ապացուցում, որ տեղ չհասցնելը կամ վնասվելը տեղի են ունեցել անհատօրինակության, անհատօրինակության կամ ապրանքի յուրահատկության պատճառով, որի մասին Պահառուն չգիտեր և չպետք է իմանար, կամ էլ Պահատուի կոպիտ անզգուշության կամ դիտավորության արդյունքում:

5.2. Պահառուն պարտավոր է Պահատուին փոխհատուցել իր կողմից հասցված բոլոր վնասների համար:

5.3. Կողմերից մեկի կողմից ապրանքի կորստի, տեղ չհասցնելու կամ վնասվածք հայտնաբերելու դեպքում (ներառյալ՝ ապրանքի որակի ակնհայտ վատթարացումը), հայտնաբերող Կողմը այդ մասին անհապաղ պետք է տեղեկացնի մյուս Կողմին: Ապրանքի համատեղ հետազոտման արդյունքներով Կողմերը կազմում են ակտ, որում նշվում են.

ա) կորցված (վնասված կամ տեղ չհասցված) ապրանքի քանակը,

բ) կորցված (վնասված կամ տեղ չհասցված) ապրանքի արժեքը:

Պահառուն պարտավոր է ակտի կազմվելու պահից հաշված 10 օրվա ընթացքում Պահատուին վճարել ակտում նշված գումարը: Վճարումը Պահատուին չի ազատում Պահատուին հասցված այլ վնասների փոխհատուցումից:

5.4. Ի պահ տրված ապրանքների պահպանության պարտականությունները Պահառուի կողմից չկատարվելու դեպքում՝ նա Պահատուին վճարում է տուգանք _____ դրամի չափով:

5.5. Պահատուի կողմից սույն պայմանագրով և այլ գործարքներով իր պարտականությունները չկատարելու (կամ եթե ենթակա չէ կատարելու) դեպքում՝ Պահառուն իրավունք չունի, որպես պարտականությունների կատարման գրավական, ի պահ տրված ապրանքներից կատարել պահումներ:

5.6. Պահատուի կողմից պարտականությունները չկատարելու դեպքում ապրանքը ետ վերցնել: Մինչև պայմանագրի ավարտման ժամկետը Պահառուն իրավունք չունի ի պահ տրված ապրանքը վաճառել կամ այլ ձևով իրացնել:

5.7. Այլ դեպքերում Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է _____ դատարանի քննությանը:

7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է լինեն գրավոր ձևով և ստորագրված Կողմերի կողմից:

7.2. Սույն պայմանագրի լուծարման և դադարեցման հիմքը որոշվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

7.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Պահատու

Պահառու

ստորագրություն

ստորագրություն

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

« ____ » _____ թ.
վայրը _____, այսուհետ՝
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
«Կողմ - 1», ի դեմս _____, որը գործում է _____ հիման
վրա, մի կողմից, և _____, այսուհետ՝ «Կողմ- 2», ի
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
դեմս _____, որը գործում է _____ հիման վրա, մյուս
կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Հաշվի առնելով, որ _____
անհրաժեշտ է _____ թ. _____ պատճառները
պայմանագրի առարկան
(այսուհետ՝ Պայմանագիր) մտցնել փոփոխություններ և լրացումներ:

2. Պայմանագրի փոփոխություններ և լրացումները

_____:

3. Սույն համաձայնագիրը կնքված է _____ լեզվով, _____, օրինակից, որոնք ունեն հավասարազոր
իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ - 1

ստորագրություն

Կողմ - 2

ստորագրություն

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

վայրը _____ « _____ » _____ թ.
_____, այսուհետ՝
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
«Կողմ - 1», ի դեմս _____, որը գործում է _____ հիման
այաշտոնը, ազգանունը, անունը
վրա, մի կողմից, և _____, այսուհետ՝ «Կողմ- 2», ի
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
դեմս _____, որը գործում է _____ հիման վրա, մյուս
այաշտոնը, ազգանունը, անունը
կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Հաշվի առնելով, որ _____
այատճառները
անհրաժեշտ է _____ թ. _____ թիվ _____ պայմանագիրը
այայնագրի առարկան
(այսուհետ՝ Պայմանագիր) լուծարել:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են վերոհիշյալ պայմանագրով Կողմերի պարտավորությունները: Կողմերի պարտավորությունները, որոնց կատարումը Կողմերն արդեն սկսել են, կկատարվեն հետևյալ կերպ.

_____:

4. Սույն համաձայնագիրը կնքված է _____ լեզվով, _____, օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ - 1

ստորագրություն

Կողմ - 2

ստորագրություն

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը _____

այսուհետ՝ «Վարկատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները

այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարկատուն պարտավորվում է Վարկառուին տրամադրել _____
(_____) վարկ՝ _____ նպատակով՝ տարեկան _____ տոկոս վճարելու
պայմանով, իսկ Վարկառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված ժամկետում վերադարձնել
ստացված վարկը և տոկոսներ վճարել դրա համար:

1.2. Ի հավաստում սույն պայմանագրի՝ Վարկառուն պայմանագիրը կնքելու պահին Վարկատուին տալիս է
ստացական՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ստանալու մասին:

1.3. Տոկոսները վճարվում են ոչ ուշ, քան տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը, տարեկան տոկոսի հաշվար-
կային դրույքի տասներկուերորդ մասի չափով:

1.4. Սույն պայմանագրով վարկը տրվում է _____ ժամկետով, որն ավարտվում է « _____ » _____ թ.:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարկատուն իրավունք ունի՝

2.1.1. այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնք ակնհայտորեն վկայում են, որ Վարկառուին տրամա-
դրված գումարը սույն պայմանագրի 1.4 կետում նշված ժամկետում չի վերադարձվել, ամբողջությամբ կամ մաս-
նակիորեն իրաժարվել սույն պայմանագրով նախատեսված վարկը Վարկառուին տրամադրելուց:

2.1.2. Վարկառուի կողմից վարկի գումարի նպատակային օգտագործման մասին սույն պայմանագրի 1.1 կետի
պահանջը չկատարելու, ինչպես նաև վարկի օգտագործման դեպքում պահանջել Վարկառուից՝ վաղաժամկետ վե-
րադարձնելու վարկը և վճարելու մինչև այդ օրը հասանելիք տոկոսները:

2.1.3. վաղաժամկետ լուծարել պայմանագիրը՝ պահանջելով Վարկառուից վերադարձնել վարկը և վճարել մին-
չև այդ օրը հասանելիք տոկոսները, եթե՝

ա) վարկն օգտագործվել է ոչ նպատակային ձևով:

բ) օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վարկառուն սնանկ է ճանաչվել:

գ) Վարկառուն չի վճարել տոկոսները:

դ) Վարկառուն չի կատարել սույն պայմանագրի այլ պայմաններ:

2.2. Վարկատուն պարտավոր է՝

2.2.1. սույն պայմանագիրն ստորագրելու օրվանից 7 (յոթ) բանկային օրվա ընթացքում Վարկառուին տրամա-
դրել սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը:

2.3. Վարկառուն իրավունք ունի՝

2.3.1. վիճարկել վարկի պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը Վարկատուից սույն պայմանագրի 1.1 կե-
տում նշված գումարը չի ստացել կամ ստացել է պակաս չափով:

Եթե սույն պայմանագիրը վերը նշված հիմքերով վիճարկելիս, պարզվում է, որ Վարկառուն սույն պայմանագրի
1.1 կետում նշված գումարը չի ստացել Վարկառուից, սույն պայմանագիրը համարվում է չկնքված: Եթե Վարկա-
ռուն Վարկատուից ստացել է պայմանագրում նշվածից պակաս գումար, սույն պայմանագիրը կնքված է համար-
վում ստացված գումարի չափով:

2.3.2. Վարկառուի կողմից սույն պայմանագրի 2.2.1 կետում՝ պարտականությունը չկատարելու կամ ձգձգելու
դեպքում վաղաժամկետ լուծարել պայմանագիրը և պահանջել Վարկատուից՝ հատուցելու իրեն պատճառված
վնասները:

2.4. Վարկառուն պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Վարկատուին վճարել տոկոսները և վերա-
դարձնել ստացված վարկի գումարը:

2.4.2. ստացված վարկն օգտագործել սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակով:

2.4.3. վերակազմակերպման կամ լուծարման դեպքում անհապաղ մարել վարկը՝ անկախ դրա մարման պայմա-
նագրային ժամկետից՝ վճարելով վարկի օգտագործման փաստացի ժամկետի տոկոսները:

2.4.4. փոստային կամ բանկային վավերապայմանների, ինչպես նաև իրավաբանական հասցեի փոփոխության
դեպքում Վարկատուին անհապաղ տեղեկացնել այդ մասին:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1. Վարկը ժամանակին չմարելու դեպքում Վարկառուն Վարկատուին վճարում է տուգանք՝ վարկի գումարի
_____ տոկոսի չափով:

3.2. Վարկի գումարի տոկոսները ժամանակին չվճարելու դեպքում Վարկառուն Վարկատուին վճարում է տույժ՝
կետանցի յուրաքանչյուր օրվա համար վարկի չվճարված տոկոսի գումարի _____ տոկոսի չափով:

3.3. Վարկառուի ստացված վարկը վերադարձնելու և դրա տոկոսների գծով ժամկետանց պարտք առաջանալու
դեպքում նշված պարտքի մարման համար Վարկառուի վճարվող գումարները սկզբում ուղղվում են տույժերի վճար-
մանը, տոկոսների գծով պարտքի սպասարկմանը, այնուհետև՝ հիմնական պարտքի գումարի մարմանը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ- ՍԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կող-
մերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը

ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

6. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<i>Բանկ (Վարկատու)</i>	<i>Փոխառու (Վարկատու)</i>
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՁԵՎ)

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վարձատուն պարտավորվում է՝ ժամանակավոր օգտագործման համար Վարձակալին ներկայացնել սույն պայմանագրի 1.2. կետում նշված գույքը, իսկ Վարձակալը պարտավորվում է դրա դիմաց վճարել վարձավճար՝ սույն պայմանագրի 3. կետով նշված չափով և ժամկետում:

1.2. Վարձատուն պարտավորվում է ժամանակավոր օգտագործման համար Վարձակալին հանձնել հետևյալ գույքը _____, այսուհետ՝ «Գույք»:

նշել վարձակալվող գույքի անվանումը

1.3. Սույն պայմանագրի 1.2. կետով նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին:

1.4. Գույքը պետք է հանձնվի Վարձակալին՝ սույն պայմանագրի ստորագրման պահից հաշված _____ օր-վա ընթացքում:

1.5. Վարձատուն պարտավոր է Վարձակալին տրամադրել Գույքը ներքոնշյալ պայմաններին համապատասխան վիճակում:

նշել պայմանները

1.6. Գույքը նախատեսված է օգտագործել _____

նպատակով:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Վարձատուն պարտավոր է՝

2.1.1. Վարձակալին նշված ժամանակին հանձնել վարձակալված Գույքը՝ սույն պայմանագրի 1. կետում նշված պայմաններին համապատասխան:

2.1.2. Իրականացնել Գույքի կապիտալ վերանորոգում:

2.2. Վարձակալը պարտավոր է՝

2.2.1. Գույքն օգտագործել սույն պայմանագրի 1.5. և 1.6. կետերի պայմաններին համապատասխան:

2.2.2. պահել Գույքը անվթար վիճակում, իր հաշվին իրականացնել ընթացիկ վերանորոգումները և կատարել ծախսեր՝ այն պահպանելու ուղղությամբ:

2.2.3. Սույն պայմանագրի 3. կետի պայմաններին համապատասխան կատարել վարձավճարի հաշվարկ՝ պայմանագրով սահմանված ժամկետում:

2.2.4. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Վարձատուին վերադարձնել Գույքը _____

վիճակում:

նշել գույքի վիճակը

3. Վարձավճարը

3.1. Վարձավճարի չափը կազմում է _____ դրամ:

3.2. Վարձակալի կողմից վարձավճարը մուծվում է ամեն ամիս (եռամսյակ), ոչ ուշ, քան վճարվելիք հաջորդ ամսվա _____ գումարն ուղարկելով Վարձատուի հաշվարկային հաշվին, որը նշված է սույն պայմանագրում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վարձակալը վճարումների ժամկետանցի համար Վարձատուին վճարում է տուգանք՝ ամսական վարձավճարի գումարի _____ տոկոսի չափով, և ժամկետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ ամսական վարձավճարի _____ տոկոսի չափով:

4.2. Տուժավճարումը Կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

4.3. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Անհաղթահարելի ուժը

5.1. Սույն պայմանագրով անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրհեղեղ, պայթյուն, հրդեհ, երկրաշարժ,

այլ տարերային աղետներ, պատերազմ, ռազմական գործողություններ, զինված հարձակում, զանգվածային անկարգություններ, մայրուղային խողովակաշարերի վթար կամ նման այլ արտակարգ դեպքեր:

5.2. Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվություններից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած այնպիսի անհատափաստի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխել կամ կանխագուշակել, և որի պատճառով Վարձակալը չի կարող շարունակել Գույքի բնականոն օգտագործումը:

5.3. Անհատափաստի ուժի ազդեցության ժամանակահատվածը մեկ ամսվանից ավելի երկարաձգվելու կամ դրա հետևանքները վեց ամսվա ընթացքում չվերացնելու դեպքում կողմերը պետք է ընդունեն սույն պայմանագրի շարունակման մասին որոշում:

6. Պայմանագրի ժամկետները

6.1. Սույն պայմանագիրը գործում է « ____ » _____ թ.-ից մինչև « ____ » _____ թ.-ը:

7. Վեճերի լուծման կարգը

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից: Սույն պայմանագրին կից հավելվածները դրա անբաժան մասն են:

8.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու

ստորագրություն

Վարձակալ

ստորագրություն

ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել _____,

աշխատանքի նկարագրությունը

իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

2. Աշխատանքները կատարելը

2.1. Աշխատանքը կատարվում է _____:

ում նյութերով, միջոցներով

2.2. Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2. հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում սույն պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

3.1.3. եթե աշխատանքի կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի կատարվելու, ողջամիտ ժամկետ նշանակել Կապալառուի թույլ տված թերությունները վերացնելու համար և եթե այդ ժամկետում Կապալառուն չի վերացնում թերությունները՝ հրաժարվել Կապալի պայմանագրից և Կապալառուի հաշվին թերությունների վերացնելը հանձնարարել այլ անձանց՝ պահանջով հատուցելու վնասները.

3.1.4. մինչև աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ժամկետում ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները.

3.1.5. աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 722 հոդվածում սահմանված երաշխիքային ժամկետում.

3.1.6. առանց կատարված աշխատանքը կարճատրելու, ինչպես նաև վնասները հատուցելու, պահանջել լուծարելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է այնպիսի աշխատանքի կատարման պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7. աշխատանքի արդյունքն ընդունելու կամ այն օգտագործելու ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 723 հոդվածով սահմանված ժամկետում, իր ընտրությամբ, Կապալառուից պահանջել՝

ա) ողջամիտ (կամ երկկողմանի համաձայնեցված) ժամկետում անհատույց վերացնել թերությունները.

բ) համաչափորեն նվազեցնել աշխատանքի համար սահմանված գինը.

գ) հատուցելու թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը.

3.1.8. աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ _____ ընթացքում, Պատվիրատուի կամ այլ
ժամկետ

անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու այդ պատճառով իր կրած բոլոր վնասները:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. աշխատանքները կատարելիս աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2. աշխատանքի կատարման համար, սույն պայմանագրի ստորագրման պահից սկսած հինգ օրվա ընթացքում, Կապալառուին հանձնել աշխատանքի կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերը.

3.2.3. ժամանակին վճարել Կապալառուի աշխատանքի համար՝ սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.

3.2.4. սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1. կատարված աշխատանքի արդյունքը ստանալու համար Պատվիրատուի չներկայանալու կամ այն ընդունելուց խուսափելու դեպքերում Պատվիրատուին գրավոր զգուշացնել և զգուշացման օրվանից երկու ամիս անց վաճառել աշխատանքի արդյունքը, իսկ ստացված գումարը, իրեն հասանելիք վճարները պահելուց հետո, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 266 հոդվածով սահմանված կարգով մուծել նոտարի կամ դատարանի դեպոզիտ.

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1. մինչև սույն պայմանագիրը կնքելը, Պատվիրատուին անհրաժեշտ և հավաստի տեղեկատվություն տրամադրել առաջարկվող աշխատանքի, դրա տեսակների և առանձնահատկությունների, գնի և վճարման ձևի մասին, ինչպես նաև Պատվիրատուի ցանկությամբ նրան հաղորդել աշխատանքին վերաբերող այլ տեղեկություններ.

3.4.2. աշխատանքը սկսել անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից ոչ ուշ, քան _____ (____) օր-վա ընթացքում.

3.4.3. աշխատանքի ընթացքը կամ աշխատանքը հետագայում շարունակելը դանդաղեցնող իրավիճակների առաջացման դեպքում անմիջապես տեղյակ պահել Պատվիրատուին.

3.4.4. Պատվիրատուի պահանջով անհատույց վերացնել աշխատանքի թերությունները.

3.4.5. աշխատանքն ավարտել ոչ ուշ, քան մինչև « _____ » _____ թ.:

3.4.6. աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործելու համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

4. Աշխատանքի գինը և վարձատրությունը

4.1. Աշխատանքի գինը որոշվում է կողմերի համաձայնությամբ և կազմում է _____ (____) դրամ, որից _____ (____) դրամը Պատվիրատուն վճարում է որպես կանխավճար:

4.2. Աշխատանքի գինը կայուն է, և Կապալառու իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.3. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի 4.1 կետում սահմանված գինը Կապալառուին վճարել աշխատանքի արդյունքն ընդունելուց հետո _____ օրվա ընթացքում, եթե աշխատանքը կատարված է պատշաճ որակով, սույն պայմանագրով սահմանված ժամկետում կամ ժամկետից շուտ՝ Պատվիրատուի համաձայնությամբ:

4.5. Սույն պայմանագրի կատարման կապակցությամբ Կապալառուին հասանելիք՝ 4.1 կետով սահմանված գինը վճարելու պարտականությունը Պատվիրատուի կողմից չկատարելու դեպքում Կապալառու իրավունք ունի պահել աշխատանքի արդյունքը մինչև Պատվիրատուն կվճարի համապատասխան գումարը:

5. Կողմերի պատասխանատվությունը

Սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Վեճերի լուծման կարգը

Պատվիրատուի և Կապալառուի միջև աշխատանքի թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած կողմի պահանջով նշանակվում է փորձաքննություն: Փորձաքննության ծախսերը կրում է փորձաքննություն պահանջած կողմը, իսկ եթե փորձաքննությունը նշանակվել է երկու կողմերի համաձայնությամբ, ապա ծախսերը նրանց միջև բաշխվում են հավասարաչափ:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

8. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրվելուց հետո և գործում է մինչև « _____ » _____ թ.:

9. Այլ պայմաններ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

ստորագրություն

Կապալառու

ստորագրություն

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՌԱՔՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Առաքող», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Հաճախորդ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Առաքողը պարտավորվում է սույն պայմանագրի _____ կետում սահմանված վարձատրությամբ և
Հաճախորդի հաշվին կազմակերպել ու մատուցել հետևյալ ծառայությունները՝

_____:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Առաքողը՝

2.1.1. կազմակերպում է Հաճախորդի բեռի փոխադրումները՝ թիվ _____ հավելվածում սահմանված ձևով
ներկայացվող գրավոր հայտերին համապատասխան.

2.1.2. կնքում է փոխադրման պայմանագրեր՝ թիվ _____ հավելվածում սահմանված պայմաններով և ձևե-
րով.

2.1.5. Հաճախորդի պահանջով տեղեկատվություն է ներկայացնում բեռների փոխադրման, պետական և այլ
գանձումների դրույքների մասին, որոնց վճարումն անհրաժեշտ է փոխադրումն իրականացնելու համար.

2.1.6. պարտավոր է Հաճախորդին հաղորդել իր ստուգած տեղեկատվության մեջ հայտնաբերված բոլոր թերու-
թյունների մասին, իսկ դրա անլիարժեքության դեպքում՝ կատարել լրացուցիչ հարցում.

2.1.7. պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն իրականացնել անձամբ:
Երրորդ անձանց ներգրավումը հնարավոր է միայն Հաճախորդի համաձայնության դեպքում.

2.1.8.

2.2. Հաճախորդը պարտավոր է՝

2.2.1. Առաքողին տրամադրել տրանսպորտային-առաքման գործառույթների իրականացման իրավունքի լիա-
զորագրերը.

2.2.2. Առաքողին տրամադրել հետևյալ փաստաթղթերը՝

ա) բեռնափոխադրման գրավոր հայտը.

բ) բեռի որոշակի հատկությունների մասին վկայող փաստաթուղթը.

գ) _____.

2.2.3. սույն պայմանագրի 3-րդ կետի համաձայն ժամանակին հատուցել Հաճախորդի ծախսերը և վճարել
պարգևավճարը:

3. Հաշվարկների կարգը

3.1. Հաճախորդը հատուցում է բեռնափոխադրման ժամանակ Առաքողի կատարած ծախսերը, երբ Առաքողը
ներկայացնում է համապատասխան հաշիվները՝ դրանց կցելով Հաճախորդի բեռների փոխադրմանը վերաբերող
երրորդ անձանց հետ տարբեր պայմանագրերի կնքման ժամանակ նրանց տված վճարային փաստաթղթերը:
Առաքողը հաշիվները ներկայացնում է ծախսերը հաստատող փաստաթղթերը ստանալուց հետո՝ _____
(_____) օրվա ընթացքում:

3.2. Բեռների փոխադրման կազմակերպման ծառայությունների իրականացման համար վարձատրությունը Հա-
ճախորդը վճարում է սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ _____ հավելվածում Առաքողի նշած
սակագներով ու դրույքներով՝ ներկայացրած հաշիվներին համապատասխան:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերը պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատա-
րելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Կողմերից յուրաքանչյուրը պետք է պարտավորությունները կատարի պատշաճ ձևով՝ մյուս կողմին ցույց
տալով հնարավոր աջակցություն:

4.3. Պայմանագրով իր պարտավորությունները խախտող կողմը պարտավոր է անհապաղ վերացնել այդ խախ-
տումները:

4.4. Փոխադրողը, ընդունված հայտին համապատասխան, բեռի փոխադրման համար տրանսպորտային միջոց-
ները չտրամադրելու, իսկ Առաքողը՝ բեռը չներկայացնելու կամ տրամադրված տրանսպորտային միջոցներն այլ
պատճառներով օգտագործելու համար կրում են պատասխանատվություն օրենքով և սույն պայմանագրով սահ-
մանված կարգով:

4.5. Բեռ փոխադրողը և Առաքողն ազատվում են տրանսպորտային միջոցները չտրամադրելու կամ տրամադր-
ված տրանսպորտային միջոցները չօգտագործելու համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել՝

4.5.1. Անհարթահարելի ուժի (ֆորս-մաժոր) հետևանքով.

4.5.2. որոշակի ուղղություններով բեռների փոխադրումներն օրենքով սահմանված կարգով ժամանակավորա-
պես դադարեցնելու կամ սահմանափակելու հետևանքով.

4.5.3. օրենքով սահմանված այլ դեպքերում:

4.6. Փոխադրողը պատասխանատվություն է կրում բեռի կորստի, պակասորդի, վնասվածքի համար, որը տեղի է ունեցել փոխադրման համար այն ընդունելուց հետո՝ մինչև բեռը ստացողին հանձնելը, եթե չի ապացուցում, որ այն տեղի է ունեցել այնպիսի հանգամանքներում, որոնք Փոխադրողը չէր կարող կանխել:

4.7. Բեռի փոխադրման ժամանակ պատճառված վնասը Փոխադրողը հատուցում է՝

4.7.1. բեռի կորստի կամ պակասորդի դեպքում՝ կորած կամ պակասած բեռի արժեքի չափով.

4.7.2. բեռի վնասվածքի դեպքում այն գումարի չափով, որով նվազել է դրա արժեքը, իսկ վերանորոգման անհնարինության դեպքում՝ ամբողջ արժեքի չափով.

4.7.3. արժեքի հայտարարման փոխադրման հանձնված բեռի կորստի դեպքում՝ հայտարարված արժեքի չափով:

Բեռի արժեքը որոշվում է վաճառողի հաշիվներում նշված գնից, իսկ հաշվում գնի վերաբերյալ պայմանի բացակայության դեպքում՝ այն գնից, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձնվում է նույնանման ապրանքների համար:

4.8. Բեռի կորստի, պակասորդի և վնասվածքի հետևանքով առաջացած վնասի հատուցման հետ մեկտեղ Փոխադրողն Առաքողին վերադարձնում է փոխադրավարձը, որը գանձվել էր կորած կամ վնասված բեռի փոխադրման համար:

4.9. Բեռի պահպանված չլինելու պատճառների մասին Փոխադրողի կազմած միակողմանի փաստաթղթերը վեճի դեպքում դատարանի կողմից կարող են ընդունվել որպես հիմք՝ Փոխադրողի կամ Առաքողի պատասխանատվության համար:

5. Վեճերի լուծման կարգը

5.1. Սույն պայմանագրից բխող վնասների հետ կապված պահանջները պետք է ներկայացվեն դրանց հիմքերը ծագելուց հետո՝ _____ օրվա ընթացքում:

5.2. Պահանջը ներկայացնելու օր է համարվում նամակի կամ ծանուցման ընդունման օրը:

5.3. Պահանջ ստացած կողմը պարտավոր է այն քննարկել և պատասխանել՝ ոչ ուշ, քան պահանջն ստանալուց հետո՝ _____ (_____) օրվա ընթացքում:

5.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև «__» _____ թ.

6.2. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ մյուս կողմին ողջամիտ ժամկետներում տեղեկացնելով այդ մասին: Հրաժարվելու մասին հայտարարած կողմը պետք է հատուցի պայմանագրի լուծարման հետ կապված մյուս կողմի կրած վնասները:

6.3. Սույն պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե կատարված են գրավոր և ստորագրված կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից.

6.4. Սույն պայմանագրի բոլոր հավելվածները և լրացումները պայմանագրի անբաժանելի մասն են:

6.5. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Առաքող

ստորագրություն

Հաճախորդ

ստորագրություն

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
(ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ)

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն վճարի դիմաց իրեն պատկանող տրանսպորտային միջոցը, այսուհետ՝ «Ավտոմեքենա», հանձնում է Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը ու իր ուժերով ծառայություններ է մատուցում դրա կառավարման և տեխնիկական շահագործման համար:

1.2. Ավտոմեքենայի բնութագիրը՝

- ա) մակնիշը՝ _____.
- բ) թողարկման տարեթիվը՝ _____.
- գ) գրանցման համարը՝ _____.
- դ) գույնը՝ _____.
- ե) շարժիչի համարը՝ _____.
- զ) շասիի (ամրաշրջանակի) համարը՝ _____.
- ը) թափքի համարը՝ _____.

1.3. Ավտոմեքենան Վարձատուին է պատկանում սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է _____:

փաստաթղթի անվանումը

1.4. Վարձատուն երաշխավորում է, որ Ավտոմեքենան վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

1.5. Վարձակալության հանձնված Ավտոմեքենայի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծարելու կամ փոփոխելու համար:

1.6. Անձնակազմի անդամները Վարձատուի աշխատողներն են: Նրանք ենթարկվում են Վարձակալի՝ Ավտոմեքենայի առևտրային շահագործմանը վերաբերող կարգադրություններին:

1.7. Ավտոմեքենան ժամանում է առավոտյան ժամը _____ - ին _____ հասցեով և գտնվում է Վարձակալի տրամադրության տակ մինչև ժամը _____ - ը: Ավտոմեքենայի ժամանման և վերադարձի մասին Վարձակալը ճանապարհային ուղեգրում կատարում է գրառումներ:

1.8. Բեռների փոխադրման ընթացքում վարորդին ուղեկցում է Վարձակալի պատասխանատու անձը: Վարորդը պարտավոր է աջակցել բեռնման և բեռնաթափման աշխատանքներին:

1.9. Տրանսպորտային միջոցի պահպանության և վերանորոգման բոլոր ծախսերը կատարում է Վարձատուն՝ բացառությամբ այն դեպքի, երբ ավտոմեքենայի վնասվածքը կամ անսարքությունն առաջացել է Վարձակալի մեղքով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. Վարձակալից պահանջել Ավտոմեքենան օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան.

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել մուծելու վարձավճարը.

2.1.3. Եթե Վարձակալը Ավտոմեքենայից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծարելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. _____ ժամը _____-ին, վարձակալին տրամադրել սույն պայմանագրի
նշել հաճախականությունը

1.1 կետով նշված Ավտոմեքենան:

2.2.2. սույն պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում վարձակալության հանձնված Ավտոմեքենան պահպանել պատշաճ վիճակում, ներառյալ՝ ընթացիկ և հիմնական վերանորոգումը, անհրաժեշտ պահեստամասերի տրամադրումը.

2.2.3. Տրանսպորտային միջոցի տեխնիկական անսարքության դեպքում, որը չի կարող վերացվել տեղում՝ վարորդի ուժերով, 2 (երկու) ժամվա ընթացքում փոխարինել համապատասխան մակնիշի այլ Ավտոմեքենայով: Այդ դեպքում 1.8 կետում նշված՝ վարորդի աշխատանքային ժամի ավարտը և Ավտոմեքենայի վերադարձի ժամը համապատասխան փոխվում են.

2.2.4. Մատուցել Ավտոմեքենայի վարման և տեխնիկական շահագործման ծառայություններ:

Մատուցված ծառայությունները պետք է ապահովեն Տրանսպորտային միջոցի բնականոն և անվտանգ շահագործումը:

Վարձատուն ինքնուրույն է որոշում վարորդներին, ինչպես նաև տեխնիկական շահագործումը իրականացնող անձանց:

Վարձատուն պարտավոր է այդ նպատակների համար տրամադրել անձանց, ովքեր ունեն անհրաժեշտ որակավորում և համապատասխանում են տվյալ տեսակի Ավտոմեքենայի շահագործման պարտադիր պահանջներին.

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. Վարձատուից պահանջել սույն պայմանագրի 1.8 կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրելու Ավտոմեքենան.

2.3.2. պահանջել Վարձատուից իրեն տրամադրելու Ավտոմեքենայի պատկանելիքները և փաստաթղթերը.

2.3.3. Ավտոմեքենայի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1. Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Ավտոմեքենայի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Ավտոմեքենայի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.3.2. Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.

2.3.3.3. պահանջել վաղաժամկետ լուծարելու պայմանագիրը.

2.3.4. պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատու չէ, Ավտոմեքենայի վիճակը վատթարացել է:

2.3.5. Վարձատուի կողմից սույն պայմանագրի 2.2.2 կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.5.1. կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետսաձգելի անհրաժեշտություն համարել հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին.

2.3.5.2. պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.

2.3.5.3. պահանջել լուծարելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. վարձավճարը Վարձատուին վճարել ժամանակին՝ սույն պայմանագրի 3- ըրդ կետով սահմանված կարգով և պայմաններով.

2.4.2. կատարել Ավտոմեքենայի առևտրային շահագործման հետ կապված ծախսերը, ներառյալ՝ վառելիքի և շահագործման ընթացքում օգտագործվող այլ նյութերի ծախսերը:

2.5. Վարձակալն իրավունք չունի, առանց Վարձատուի համաձայնության, Ավտոմեքենան հանձնել ենթավարձակալության.

2.6. Վարձակալը Ավտոմեքենայի առևտրային շահագործման շրջանակներում իրավունք ունի, առանց Վարձատուի համաձայնության, իր անունից երրորդ անձանց հետ կնքել փոխադրումների և այլ պայմանագրեր, եթե դրանք չեն հակասում Ավտոմեքենայի օգտագործման՝ սույն վարձակալության պայմանագրում նշված նպատակների և նշանակությանը:

3. Հաշվարկների կարգը

3.1. Վարձավճարի ամսական չափն, առանց ավելացված արժեքի հարկի, կազմում է _____ (_____) դրամ:

3.2. Նշված վճարը Վարձակալը վճարում է որպես կանխավճար՝ մեկ ամիս առաջ, յուրաքանչյուր ամսվա 5- ից ոչ ուշ:

3.3. Ավելացված արժեքի հարկի վճարը նշվում է առանձին տողով:

3.4. Ավտոմեքենան սույն պայմանագրի 1.8 կետում նշված ժամկետից ավել օգտագործելու դեպքում, Վարձակալը Վարձատուին յուրաքանչյուր ժամի համար լրացուցիչ վճարում է _____ (_____) դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3.5. Կողմերի միջև վերջնական հաշվարկները կատարվում են յուրաքանչյուր ամիսն ավարտվելուց հետո:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Ավտոմեքենայի վնասման դեպքում Վարձակալը պարտավոր է հատուցել Վարձատուին հասցրած վնասները, եթե վերջինս ապացուցում է, որ Ավտոմեքենայի վնասվածքը տեղի է ունեցել այնպիսի հանգամանքներում, որոնց համար Վարձակալը պատասխանատու է օրենքին կամ վարձակալության պայմանագրին համապատասխան:

4.2. Երրորդ անձանց պատճառած վնասի համար պատասխանատվությունը կրում է Վարձատուն՝ օրենքով սահմանված կարգով:

4.3. Տրանսպորտային միջոցը 2 (երկու) ժամից ավելի չտրամադրելու դեպքում Վարձատուն ուշացման յուրաքանչյուր ժամի համար Վարձակալին վճարում է տուգանք՝ _____ (_____) դրամի չափով:

4.4. Վարձավճարի մուծումների կետանցի դեպքում Վարձակալը Վարձատուին վճարում է տուժավճար՝ վճարման ենթակա գումարի _____ տոկոսի չափով:

5. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծարումը

6.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծարվել, եթե Վարձակալը՝

6.1.1. Ավտոմեքենան օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ նշանակության խախտումներով.

6.1.2. Էականորեն վատթարացել է Ավտոմեքենայի վիճակը.

6.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը:

6.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծարվել, եթե՝

6.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Ավտոմեքենան կամ խոչընդոտներ է ստեղծել Ավտոմեքենան պայմանագրի պայմաններին կամ նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.

6.2.2. Վարձակալին հանձնված Ավտոմեքենան ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին, և վերջինս պայմանագիրը կնքելիս չէր կարող հայտնաբերել:

6.2.3. Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Ավտոմեքենան դարձել է

օգտագործման համար ոչ պիտանի:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Պայմանագրի գործողության ժամկետը

8.1. Սույն պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է «__» _____ ____ թ.-ից մինչև _____ թ.:

8.2. Սահմանված ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը կարող է երկարաձգվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու

ստորագրություն

Վարձակալ

ստորագրություն

ՓՈՒՆԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

վայրը _____ « _____ » _____ թ.

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կողմ-1», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կողմ-2», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Կողմ-1-ը պարտավորվում է Կողմ-2-ին հանձնել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ապրանքը, իսկ Կողմ-2-ը պարտավորվում է Կողմ-1-ին հանձնել 1.3 կետում նշված ապրանքը:

1.2. Կողմ-1-ը հանձնում է _____
ապրանքի անվանումը, քանակը
որի սեփականատերն է ինքը, ինչը հաստատվում է _____
: _____
փաստաթղթի անվանումը

1.3. Կողմ-2-ը հանձնում է _____
ապրանքի անվանումը, քանակը
որի սեփականատերն է ինքը, ինչը հաստատվում է _____
: _____
փաստաթղթի անվանումը

1.4. Սույն պայմանագրի 1.3 կետում նշված փոխանակման ենթակա ապրանքները համարժեք են:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Ապրանքները հանձնվում են միաժամանակ՝ « _____ » _____ թ.:

2.2. Ապրանքների հանձնման վայրը _____
հանձնման վայրի հասցեն

2.3. Սույն պայմանագրի 1.2 և 1.3 կետերում նշված փոխանակման ենթակա ապրանքները հանձնելու և ընդունելու հետ կապված ծախսերը կողմերի միջև բաշխվում են հավասարաչափ:

2.4. Ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է կողմերից յուրաքանչյուրին՝ ապրանքը մյուս կողմին հանձնելու պահից:

3. Հաշվարկների իրականացման կարգը

3.1. Սույն պայմանագրով կողմերի միջև դրամային արտահայտությամբ հաշվարկներ չեն իրականացվում:

3.2. Սույն պայմանագրով գործառնությունների հաշվառում իրականացնելու նպատակով ապրանքների արժեքը կազմում է՝
ա) ըստ հավելված 1-ի՝ _____ (_____) դրամ, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը.
բ) ըստ հավելված 2-ի՝ _____ (_____) դրամ, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում մեղավոր կողմը մյուս կողմին վճարում է տուգանք՝ պայմանագրի գնի _____ տոկոսի չափով, և կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ պայմանագրի գնի _____ տոկոսի չափով:

4.2. Տուգանքի (տուգանքի կամ տույժի) վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունների կատարումից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև _____:

7.2. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր և ստորագրվում կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

7.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ -1

ստորագրություն

Կողմ- 2

ստորագրություն

ՓՈՒՆԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՐՄԱՅԻ ՄԻՋԵՎ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը _____
այսուհետ՝ «Ձեռնարկություն», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____

կազմակերպության անվանումը _____
այսուհետ՝ «Ֆիրմա», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է, որպես սեփականություն, մյուս Կողմին հանձնել ապրանք՝ փոխանակելով այն մեկ այլ ապրանքի հետ:

1.2. Ձեռնարկության կողմից փոխանցվող ապրանքի անվանումը, քանակը և որակը սահմանվում են հավելված 1-ով:

1.3. Ֆիրմայի կողմից փոխանցվող ապրանքի անվանումը, քանակը և որակը սահմանվում են հավելված 2-ով:

1.4. Փոխանակման ենթակա ապրանքները (հավելված 1 և 2) համարվում են համարժեք, իսկ հանձնման և ընդունման ծախսերը իրականացնում է այն կողմը, որը կրում է համապատասխան պարտավորություններ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Ձեռնարկությունը պարտավորվում է սույն պայմանագրի ստորագրման պահից հաշված _____ օրվա ընթացքում Ֆիրմային փոխանցել հավելված 1-ում նշված ապրանքները՝ հասցնելով այն Ֆիրմայի պահեստ, որը գտնվում է _____ հասցեում:

2.2. Ֆիրման պարտավորվում է Ձեռնարկության կողմից 2.1. կետով նշված պարտավորության կատարման պահից հաշված _____ օրվա ընթացքում Ձեռնարկությանը փոխանցել հավելված 2-ում նշված ապրանքները՝ հասցնելով այն Ձեռնարկության պահեստ, որը գտնվում է _____ հասցեում:

2.3. Ապրանքների որակի և քանակի ընդունում-հանձնումը Կողմերը իրականացնում են ապրանքների փոխանցման օրը՝ Կողմերի ներկայացուցիչների ներկայությամբ: Ներկայացուցիչների լիազորումը պետք է հավաստվի լիազորագրով:

2.4. Ապրանքների յուրաքանչյուր ընդունման-հանձնման արդյունքով Կողմերը կազմում են ընդունման-հանձնման արձանագրություն:

3. Հաշվարկների կարգը և գինը

3.1. Սույն պայմանագրով կողմերի միջև դրամային արտահայտությամբ հաշվարկներ չեն իրականացվում:

3.2. Սույն պայմանագրով գործառույթների հաշվառում իրականացնելու նպատակով ապրանքների արժեքը կազմում է՝

ա) ըստ հավելված 1-ի՝ _____ (_____) դրամ, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը.

բ) ըստ հավելված 2-ի՝ _____ (_____) դրամ, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը:

4. Այլ պայմաններ

4.1. Սույն պայմանագրով փոխանակվող ապրանքների սեփականության իրավունքը ապրանքն ընդունող Կողմին անցնում է այդ ապրանքն իրեն փոխանցելու պահից:

4.2. Սույն պայմանագրին կից կիրառվում են համապատասխան առքուվաճառքի մասին սկզբունքներ: Այդ դեպքում Կողմերից յուրաքանչյուրը ճանաչվում է ապրանքի վաճառող, որը պարտավորվում է հանձնել, և ապրանքի գնորդ, որը պարտավորվում է ընդունել՝ իբրև փոխանակություն:

4.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի վավերացման (ստորագրման) պահից և գործում է մինչև « _____ » _____ թ.

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Ապրանքների հանձնման պարտավորությունների կատարման ընթացքում ժամկետանց թույլ տված Կողմը մյուս Կողմին վճարում է տուժավճար՝ փոխանցման ենթակա ապրանքի _____ տոկոսի չափով՝ ժամկետանցի յուրաքանչյուր օրվա համար:

5.2. Այլ դեպքերում Կողմերի պատասխանատվությունը սահմանվում է գործող օրենսդրությամբ:

6. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

6.1. Ձեռնարկություն _____

6.2. Ֆիրմա _____

Ձեռնարկություն

Ֆիրմա

ստորագրություն

ստորագրություն

ՓՈՒՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Փոխատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, եւ _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Փոխառու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Փոխատուն՝ որպես սեփականություն, Փոխառուին է հանձնում դրամական միջոցներ՝ _____ (_____) չափով՝ Փոխառուի կողմից, թիվ 1 հավելվածի համաձայն, հիմնական միջոցներ (այսուհետ՝ Հիմնական միջոցներ) ձեռք բերելու համար, իսկ Փոխառուն պարտավորվում է Փոխատուին վերադարձնել նույն չափի դրամային գումար (այսուհետ՝ Փոխառության գումար):

1.2. 1.1 կետում նշված Փոխառության գումարը Փոխառուին է տրամադրվում _____ ժամկետով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Փոխատուն պարտավորվում է սույն պայմանագրի 1.1 կետում նշված դրամական միջոցները Փոխառուին տրամադրել սույն պայմանագրի ստորագրման պահից սկսած _____ օրվա ընթացքում դրամական միջոցների ստացման ակտի կազմամբ և ստորագրմամբ, որում նշվում են՝ ակտը կազմելու օրը և վայրը, կողմերի անվանումները, Փոխառուի հաշվին դրամական միջոցներն ստանալու օրը, Փոխառուի հաշվին ստացված դրամական միջոցների գումարը, կողմերի ստորագրությունները:

2.2. Փոխառության տրամադրման օր է համարվում ակտի ստորագրման օրը:

2.3. Փոխատուն իրավունք ունի վերահսկել Փոխառուի կողմից ստացված դրամական միջոցների օգտագործումը:

2.4. 1.2 կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո Փոխառուն պարտավորվում է վերադարձնել սույն պայմանագրով Փոխատուից ստացված փոխառության գումարը սույն պայմանագրի 2.6 կետում սահմանված կարգով ու պայմաններով:

2.6. Ստացված փոխառության գումարը Փոխառուն վերադարձնում է ոչ ուշ, քան սույն պայմանագրի 1.2 կետում նշված փոխառության ժամկետը լրանալու հաջորդ օրը:

Փոխառության գումարի հետ միաժամանակ Փոխառուն փոխանցում է նաև տոկոսների գումարը՝ դրամական միջոցների օգտագործման ամբողջ ժամանակահատվածի համար _____ տոկոս հաշվարկով:

2.7. Փոխառուին փոխառության գումարի վերադարձման, այսինքն՝ Փոխառուի պարտավորությունների կատարման օր է համարվում Փոխատուի կողմից դրամական միջոցներն ստանալու օրը:

2.8. Փոխառուն իրավունք ունի Փոխառուի համաձայնությամբ փոխառության գումարը վերադարձնել մինչև սույն պայմանագրով սահմանված վերադարձման ժամկետը լրանալը՝ վճարելով նաև փոխառության տոկոսները՝ ելնելով դրամական միջոցների օգտագործման փաստացի ժամկետից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.2. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել կողմերի համաձայնությամբ, գրավոր և ստորագրված կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

3.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Փոխատու

Փոխառու

ստորագրություն

ստորագրություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԼԻՉԻՆԳԻ) ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է Վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել Վարձակալի կողմից որոշած Վաճառողից և վճարի դիմաց հանձնել Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար:

1.2. Սույն պայմանագրով վարձակալության է տրվում _____, այսուհետ՝

նկարագրել գույքը

«Լիզինգի օբյեկտ»:

1.3. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Լիզինգի օբյեկտի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.4. Վարձակալության հանձնված Լիզինգի օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծարելու կամ փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. պահանջել Վարձակալից Լիզինգի օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան:

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների խախտման դեպքում նրանից պահանջել մուծելու վարձավճարը:

2.1.3. եթե Վարձակալը Լիզինգի օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ նշանակությանն անհամապատասխան, ապա պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.1.4. վերահսկել և Վարձակալից պահանջել կատարելու Լիզինգի օբյեկտի ընթացիկ և հիմնական վերանորոգումը:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. ծանուցել Վաճառողին, որ Լիզինգի օբյեկտը նախատեսված է Վարձակալին վարձակալության հանձնելու համար:

2.2.2. սույն պայմանագիրը ստորագրելուց հետո _____ օրվա ընթացքում Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցել Լիզինգի օբյեկտը ձեռք բերելու համար նախատեսված գումարը:

2.2.3. Վարձակալին հանձնել Վաճառողի կողմից իր պարտականությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման, ինչպես նաև Լիզինգի օբյեկտի թերությունները վերացնելու կապակցությամբ Վաճառողի նկատմամբ պահանջի իր իրավունքը:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. Վաճառողից պահանջել՝ Վարձատուի կողմից նրա հաշվարկային հաշվին սույն պայմանագրի 2.2.2 կետում սահմանված գումարը փոխանցելուց հետո _____ ժամկետում իրեն տրամադրել Լիզինգի օբյեկտը:

2.3.2. Վաճառողից պահանջել իրեն տրամադրելու Լիզինգի օբյեկտի պատկանելիքներն ու փաստաթղթերը:

2.3.3. Վաճառողից պահանջել Լիզինգի օբյեկտն իրեն տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան վիճակում:

2.3.4. Լիզինգի օբյեկտի օգտագործմանը լրիվ կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ, Վաճառողից պահանջել անհատույց վերացնել Լիզինգի օբյեկտի թերությունները կամ հատուցել դրա թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

2.3.5. Վաճառողին ներկայացնել Լիզինգի օբյեկտի որակին, կոմպլեկտայնությանը վերաբերող այլ պահանջներ:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. ժամանակին մուծել Լիզինգի օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վճարը:

2.4.2. Լիզինգի օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան:

2.4.3. Լիզինգի օբյեկտը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ և հիմնական վերանորոգումը:

3. Հաշվարկները

3.1. Սույն պայմանագրով Լիզինգի օբյեկտի համար վարձավճարի չափը կազմում է ամսական _____ (_____) դրամ, որը Վարձակալը վճարում է Վարձատուին յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո, ոչ ուշ, քան հաջորդ ամսվա _____:

4. Պայմանագրի վաղաժամկետ լուծարման հիմքերը

4.1. Վարձատուի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծարվել, եթե Վարձակալը՝

4.1.1. Լիզինգի օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմաններին կամ նշանակության խախտումներով:

4.1.2. Էականորեն վատթարացրել է Լիզինգի օբյեկտի վիճակը:

4.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը:

4.1.4. սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել Լիզինգի օբյեկտի ընթացիկ և հիմնական վերանորոգումը:

4.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծարվել, եթե՝

4.2.1. Վարձատուրն խոչընդոտներ է ստեղծել Լիզինգի օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ նշանակությամբ համապատասխան օգտագործելու համար:

4.2.2. Վարձատուրն չի կատարել սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով Վարձատուրն պատասխանատվություն չի կրում վարձակալության հանձնված Լիզինգի օբյեկտի և Վաճառողի ընտրության համար:

5.2. Վարձատուրն Վարձակալի առջև պատասխանատվություն չի կրում իր և Վաճառողի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի պահանջները Վարձակալի պահանջով՝ Վաճառողի կողմից չկատարելու համար:

5.3. Լիզինգի օբյեկտի պատահական կորստի և պատահական վնասվածքի ռիսկը Վարձակալին է անցնում Լիզինգի օբյեկտը նրան հանձնելու պահից:

5.4. Վարձակալը վճարումների կետանցի համար Վարձատուրին վճարում է տուգանք՝ ամսական վարձավճարի գումարի _____ տոկոսի չափով, և կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ ամսական վարձավճարի գումարի _____ տոկոսի չափով:

5.5. Տույժերի վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց և խախտումները վերացնելուց:

